

ՊԵՐՔԵՐ ԵՒ ՊԵՊՔԵՐ
ԵՎԵՊԵՏԻՌ ՄԱՏՄՈՒԹԵԼԷ

ՍԻԼՎԻ ԱՒԱԳԵԱՆ



ՊԵՊՔԵ
2015

Հեղինակը՝

Միլլի Աւագեան, դասափօս Վարդապետական Աստուածաբանութեան
(Systematic Theology), Մերձաւոր Արեւելի Աստուածաբանա-
կան Ճեմարանէն ներս, Պէյրութ-Լիբանան:

Դէմքեր եւ Դէպքեր
Եկեղեցիի Պատմութենէն

Սիլվի Աւագեան

Բովանդակություն

Ներկայ Հրատարակության Մասին	7
Ներածական	9
Աստուածաշունչի Գիրքերը եւ իրենց Համառոտագրությունները	11
Քարտէսներ	14
Ա. Եկեղեցիին Նշանակությունը եւ Սկիզբը	17
1. Եկեղեցիին Նշանակությունը	18
2. Յիսուս եւ իր Աշակերտները	21
3. Պողոս Առաքելալի Առաքելությունը եւ Առաջին Դարու Եկեղեցիներ	25
Բ. Ա.-Գ. Դարերու Եկեղեցին	31
4. Եկեղեցիին Տարածումը	32
5. Վէճ Գնոստիկներու Հետ	35
6. Քրիստոնէական Հաւատքի Պաշտպան՝ Յուստինոս Վկայ	38
7. Յստակեցնել Քրիստոնէական Դաւանանքները	42
8. Հռոմի Եկեղեցին եւ Քրիստոնեաները Հռոմէական Աշխարհին Մէջ	47

9. Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Դպրոցները	51
Գ. Եկեղեցական Առաջին Ժողովներ	57
10. Մեծն Կոստանդիանոս	58
11. Յիրաւի Աստուած - Յիրաւի Մարդ	62
Դ. Եկեղեցիին Հիմնական Բաժանումները	69
12. Ուղղափառ Եկեղեցին	70
13. Հայ Առաքելական Եկեղեցին	
Ա. - Պատմական Ակնարկ	75
14. Դէմքեր Հայ Առաքելական Եկեղեցիէն	
Բ. Աղօթքի Մարդ՝ Գրիգոր Նարեկացի	79
15. Դէմքեր Հայ Առաքելական Եկեղեցիէն	
Գ. - Մեծ Վարդապետ՝ Գրիգոր Տաթևացի	84
16. Կաթողիկէ Եկեղեցին	
Ա. - Պատմական Ակնարկ	87
17. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն	
Բ. - Ֆրանսիս Ասիզի	94
18. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն	

<i>Գ. – Թուվմաս Աքուինացի</i>	<i>97</i>
<i>19. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն</i>	
<i>Դ. – Մայր Թերեզա</i>	<i>101</i>
<i>20. Աւետարանական Եկեղեցին – Բարեկարգումի Շրջան</i>	<i>104</i>
<i>21. Հայ Աւետարանական Եկեղեցին</i>	<i>112</i>
<i>Ե. Միջ - Եկեղեցական Շարժումներ</i>	<i>119</i>
<i>22. Միջ - Եկեղեցական Շարժումներ</i>	<i>120</i>
<i>Աղբիւրներու Ցանկ</i>	<i>125</i>

Ներկայ Հրատարակութեան Մասին

Ներկայ հրատարակութիւնը (ինչպէս նաեւ՝ «Ակնարկ Աստուածաշունչին - Պատմական եւ Հոգեւոր Տեսանկիւններէ» հաստորը արդիւնքն է 2001-2004 տարիներուն ընթացքին տարած աշխատանքիս: Օրին՝ Լիբանանի Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդը ծրագրեց Հայ Աւետարանական վարժարաններու բոլոր դասարաններուն համար Աստուածաշունչի դասագիրքեր պատրաստել: Ուրիշներու կողքին, ինծի վստահուեցաւ 7րդ, 8րդ եւ 10րդ դասարաններու դասագիրքեր պատրաստելու աշխատանքը: Այս հրատարակութիւնը ամփոփումն է 10րդ դասարանի ծրագիրին (Դէմքեր եւ Դէպքեր Եկեղեցիի Պատմութենէն), որոշ փոփոխութիւններով:

Հոս պէտք է յիշել թէ Կրթական Խորհուրդը երեք ընթերցողներ ճշդած էր վերոնշեալ ծրագիրին համար.- Տիկ. Մարիէթ Շահնազարեան՝ դաստիարակչական ընթերցումի, Վեր. Ծան Խանճեան՝ պատմական ընթերցումի եւ Վեր. Յովհաննէս Սվանեան՝ լեզուական ընթերցումի համար: Ընորհակալութիւն իրենց:

Ընորհակալութիւն Լիբանանի Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդին, որ այս ծրագիրին գաղափարը յղանալով առիթ ստեղծեց անոր իրականացման: Ընորհակալութեան խօսք եւս Տիկնայք Սօսի Չիլինկիրեանի եւ Եւնիկէ Եագուպեանի, գործէն տարբեր մասեր կարդալով պէտք եղած լեզուական սրբագրութիւնները կատարելուն համար. ինչպէս նաեւ Տիկ. Անի Քեստենեան-Պասէթի, գիրքին կողքին դասաւորումին համար:

Ներկայ աշխատանքը սովորական պատմութեան գիրք մը չէ. ան չի բաւարարուիր Եկեղեցւոյ պատմութիւնը ներկայացնելով միայն, այլ՝ այդ մէկը կը կատարէ յատուկ աստուածաբանական եւ էքիմէնիք տեսանկիւններէ:

Գիրքը կը ջանայ բացատրել եւ յստակեցնել որոշ պատմական եւ աստուածաբանական իրողութիւններ, որոնք դարերու ընթացքին յաճախ մթութեան մէջ մնացած են եւ կամ անոնց շուրջ որոշ թիրիմացութիւններ ստեղծուած են: Այս իմաստով գիրքը կ'օգտագործէ պարզ եւ մատչելի ոճ, միեւնոյն ժամանակ կը ներկայացնէ ուսումնասիրուած բանական սերտողութիւն, խուսաբելով ժողովրդական կամ աւանդական մօտեցումներէ:

Գիրքը իր պատմական եւ աստուածաբանական ներդրումին կողքին կը ջանայ պատմութեան եւ աստուածաբանութեան հոգեւոր նշանակութիւնը ի յայտ բերել: Եկեղեցոյ պատմութիւնը եւ Քրիստոնէական Աստուածաբանութիւնը անհմաստ պիտի թուին եթէ չկարողանան օժանդակել ժամանակակից հաւատացեալին հոգեւոր կեանքին եւ հաւատքին շինութեան:

Ներկայ հրատարակութիւնը կրնան գործածել անհատներ, ինչպէս նաեւ բոլոր հայկական վարժարանները կամ եկեղեցական խմբակները, որոնք Քրիստոնէայ Եկեղեցոյ պատմութեան մասին կ'ուզեն կարդալ, եւ յատկապէս ծանօթանալ աստուածաբանական տարբեր մօտեցումներուն, եկեղեցիներու տարբեր յատկութիւններուն, միշտ գնահատելով Աւետարանին պատգամը:

Վերջապէս յատուկ շնորհակալութիւն Դոկտ. Արմէն Իւրնէշլեանին, որուն բժախնդիո ընթերցումն ու լեզուական սրբագրութիւնը կարելի դարձուցին որ գործը սահուն լեզուական արտայայտութիւններով, յստակ գաղափարներով եւ մաքուր հայերէնով ընթերցողին հրամցուի:

Ներածական

Քրիստոնեայ Եկեղեցին ունի շուրջ 2000 տարիներու պատմութիւն: Եկեղեցոյ պատմութիւնը, ինչպէս որեւէ ազգի կամ նոյնիսկ անհատի մը պատմութիւնը, միշտ ալ փայլուն եւ յաջողակ չէ եղած: Եկեղեցին հանդիպած է տազնապալից պարագաներու, ինչպէս նաեւ զոհը դարձած է հասարակութեան տնտեսական, ընկերային եւ քաղաքական պայմաններուն, որոնք իր ինքնութիւնն ու իրականութիւնը վտանգած են:

Այսուհանդերձ, մինչեւ օրս քրիստոնեան կ'ուզէ պահել իր հաւատքն ու եկեղեցին, ոչ թէ որեւէ արժանիքի կամ առանձնաշնորհումի մը համար, որուն տիրացած է իր եկեղեցին, այլ որովհետեւ այդ եկեղեցիին գլուխը, ինչպէս բոլոր եկեղեցիներուն գլուխը, Յիսուս Քրիստոս է: Տարբեր եկեղեցիներ տարբեր դերեր խաղացած են պատմութեան ընթացքին. եկեղեցին երբեմն Պետրոսի նման ուրացած է իր Տէրը, երբեմն՝ փարիսեցիներուն նման պաշտպանած է իր գոց համոզումներն ու դաւանանքները, բայց շատ յաճախ նմանած է Յիսուսի աշակերտներուն, որոնք իր մահէն եւ յարութենէն ետք քարոզած են Խաչեալ Տէրը: Այս իմաստով Եկեղեցոյ պատմութեան հերոսները կը պատկանին տարբեր եկեղեցական դաւանանքներու, սակայն իրենց միացնողը Յիսուս Քրիստոս է՝ գլուխը մարմնին, որն է Ընդհանրական Եկեղեցին:

Խաչեալ Քրիստոսը Եկեղեցիին գլուխը ըլլալուն համար կը հաշտուինք ցաւերով եւ նոյնիսկ վէճերով լեցուն մեր պատմութեան հետ: Եկեղեցին եւ հաւատացեալներ ընդհանրապէս, եւ հայ քրիստոնեաներ յատկապէս, պատմութեան ընթացքին ճշմարտութիւնը, ինչպէս նաեւ մարդուն արժանապատուութիւնն ու արժանիքը բարձր պահելու համար անարգուած, հալածուած, տառապած եւ ջարդուած են: Այսօր սակայն, քրիստոնեան կրնայ

հաշտուիլ իր անցեալին հետ որովհետեւ իր դիմաց ունի
խաչեալ եւ Յարուցեալ Քրիստոսը: Յիսուսի խաչելութենէն
մօտ 2000 տարիներ ետք, տակաւին նոյն ճշմարտութիւնը
իրական է մեզի համար՝ չկայ Քրիստոնէութիւն առանց
խաչի: Առաքեալը այս ճշմարտութիւնը կը նկարագրէ
գրելով՝ «բայց ես՝ քա՛ն լիցի որ պարծենամ, հապա միայն
մեր Տէր Յիսուս Քրիստոսին խաչովը, որով աշխարհ ինձի
խաչը ելած է, ես ալ՝ աշխարհին» (Գղ.6.14):

Այս գիրքին նպատակը, ուրեմն, եկեղեցւոյ
բաժանումները եւ թերութիւնները շեշտել չէ, ո՛չ ալ մէկ
տեսակէտ պաշտպանելով՝ այլ տեսակէտեր քննադատել:
Այսօր, հաւատացեալը, իր պատմութեան, ինչպէս նաեւ
իր դրացիին կամ իրմէ տարբերին պատմութեան եւ անոր
դաւանած ճշմարտութեան ծանօթանալով, եւ մանաւանդ
Յիսուսի օրինակին հետեւելով, կանչուած է սիրելու եւ
ներելու, ինչպէս որ Յիսուս սիրեց եւ խաչին վրայէն
նոյնիսկ զինք խաչողներուն համար աղօթեց: Եկեղեցւոյ
պատմութեան անդրադառնալով նաեւ կ'անդրադառ-
նանք, թէ այս է խաչը որ քրիստոնէականեր կանչուած են
վերցնելու՝ սիրել եւ ներել: Սէրը, իր քրիստոնէական
իմաստով, կը նկարագրուի խաչին խորհուրդով, որ
կենթադրէ մեծ զոհողութիւն, խոնարհութիւն, անձնատուր
եւ անձնուրաց կեանք, եւ սիրո՛ւմ միայն գալիք փառքին
յոյսը կ'իմաստաւորուի: Ա՛ն, որ Տիրոջ օրինակին
հետեւելով կրնայ սիրել, կրնայ նաեւ յուսալ գալիք փառ-
քին, այսինքն յարութեան, որովհետեւ միա՛յն սէրը կրնայ
մահը յաղթահարել. «... որպէսզի եթէ իր
չաչարանքներուն կցորդ ըլլանք, իր փառքին ալ հաղորդ
ըլլանք» (Հն.8.17):

Աստուածաշունչի գիրքերը եւ իրենց համառօտագրութիւնները

Հին Կտակարան

Օրէնքներու գիրքեր

Ծննդոց	Ծն.
Ելից	Ել.
Ղեւտացոց	Ղւ.
Թուոց	Թւ.
Երկրորդ Օրինաց	Բ.Օր.

Պատմական Գիրքեր

Յեսուայ	Յս.
Դատաւորաց	Դտ.
Հոսիթայ	Հո.
Ա. Թագաւորաց	Ա.Թգ.
Բ. Թագաւորաց	Բ.Թգ.
Գ. Թագաւորաց	Գ.Թգ.
Դ. Թագաւորաց	Դ.Թգ.
Ա. Մնացորդաց	Ա.Մն.
Բ. Մնացորդաց	Բ.Մն.
Եզրասայ	Եզ.
Նէեմեայ	Նէ.
Եսթերայ	Ես.

Բանաստեղծական Գիրքեր

Յոբայ	Յոբ.
Սաղմոսաց	Սղ.
Առակաց	Առ.
Ժողովողի	Ժղ.
Երգ Երգոց	Երգ.

Մարգարեության Գիրքեր

Եսայեայ

Ես.

Երեմեայ

Եր.

Ողբ Երեմեայ

Ողբ.

Եզեկիելի

Եզ.

Դանիելի

Դն.

Ովսեայ

Ովս.

Յովելեայ

Յվլ.

Ամովսայ

Ամս.

Աբդիու

Աբդ.

Յովնանու

Յվն.

Միքիայ

Մք.

Նաումայ

Նւ.

Ամբակումայ

Ամբ.

Սոփոնեայ

Սփ.

Անգեայ

Անգ.

Զաքարեայ

Զք.

Մաղաքեայ

Մղ.

Նոր Կտակարան

Աւետարան

Ըստ Մատթեոսի

Մտ.

Ըստ Մարկոսի

Մր.

Ըստ Դուկասու

Դկ.

Ըստ Յովհաննու

Յհ.

Գործք Առաքելոց

Գրծ.

Թուղթ Պողոսի առաքելոյն

Առ Հռովմայեցիս

Հռ.


Առ Կորնթացիս Ա.

Ա. Կր.

Առ Կորնթացիս Բ.

Բ. Կր.

<i>Ան Գաղատացիս</i>	<i>Գղ.</i>
<i>Ան Եփեսացիս</i>	<i>Եփ.</i>
<i>Ան Փիլիպպեցիս</i>	<i>Փլպ.</i>
<i>Ան Կողոսացիս</i>	<i>Կղ.</i>
<i>Ան Թեսաղոնիկեցիս Ա.</i>	<i>Ա.Թս.</i>
<i>Ան Թեսաղոնիկեցիս Բ.</i>	<i>Բ.Թս.</i>
<i>Ան Տիմոթէոս Ա.</i>	<i>Ա.Տմ.</i>
<i>Ան Տիմոթէոս Բ.</i>	<i>Բ.Տմ.</i>
<i>Ան Տիտոս</i>	<i>Տիտ.</i>
<i>Ան Փիլիմոն</i>	<i>Փլմ.</i>
<i>Թուղթ Ան Եբրայեցիս</i>	<i>Եբր.</i>
<i>Թուղթ Ընդհանրական</i>	
<i>Յակոբոս ընդհանրական</i>	<i>Յկ.</i>
<i>Պետրոսի Ա. ընդհանրական</i>	<i>Ա.Պտ.</i>
<i>Պետրոսի Բ. ընդհանրական</i>	<i>Բ.Պտ.</i>
<i>Յովհաննոս Ա. ընդհանրական</i>	<i>Ա.Յհ.</i>
<i>Յովհաննոս Բ. ընդհանրական</i>	<i>Բ.Յհ.</i>
<i>Յովհաննոս Գ. ընդհանրական</i>	<i>Գ.Յհ.</i>
<i>Յուդայի ընդհանրական</i>	<i>Յդ.</i>
<i>Յայտնութիւն Յովհաննոս</i>	<i>Յյտ.</i>



Ա. Եկեղեցիին Նշանակությունը

եւ Սկիզբը

1. Եկեղեցիին Նշանակությունը

Եկեղեցիին Նշանակությունը եւ Հիմը

Եկեղեցի բառը, յունարէն՝ «εκκλησια» [ekklesia], կը նշանակէ խումբ մը մարդիկ, որոնք իրենց տուներէն դուրս կանչուելով կը հաւաքուին յատուկ նպատակի մը համար: Քրիստոնէական նշանակութեամբ, եկեղեցին ժողովուրդն է որ հաւաքուած է աղօթելու եւ զԱստուած պաշտելու: Այս իմաստով եկեղեցին շէնք կամ կալուած մը չէ, այլ՝ հաւատացեալներու խումբ:

Եկեղեցին, Աստուածաշունչին մէջ, յաճախ նմանցուած է մարդու մարմնին, որ ունի տարբեր անդամներ, սակայն միեւնոյն ժամանակ մէկ մարմին է: Եկեղեցիին մէջ ալ իւրաքանչիւրը ունի յատուկ պարգեւներ, որոնք կը տարբերին ուրիշներու պարգեւներէն, սակայն միասին կը գործեն բաժնեկցելով իրենց յաջողութիւնները, ինչպէս նաեւ ցաւերը եւ նեղութիւնները: Եկեղեցիին գլուխը Յիսուս ինք է, որ կը զօրացնէ եւ կ'առ աջնորդէ Եկեղեցին, ինչպէս գլուխը կ'ընէ մարմնին: Հետեւաբար, Յիսուսի պատուէրները հիմն են եկեղեցիի ուսուցմունքներուն, սակայն եկեղեցի ըլլալու համար այդ պատուէրները գիտնալը բաւարար չէ, այլ անոնց համաձայն ապրիլը անհրաժեշտ է:

Եկեղեցիին նպատակը

Եկեղեցիին նպատակը Յիսուսի գործը եւ առաքելութիւնը աշխարհին վրայ շարունակել է. այսինքն խօսքով եւ գործով Աստուծոյ Թագաւորութեան մասին սորվեցնել եւ վկայել, եւ այդպիսով Աստուծոյ Թագաւորութեան ճշմարտութիւնը մեր կեանքին մէջ կարելի եղածին չափ իրական դարձնել: Այս մէկը Եկեղեցին կ'ընէ Աստուծոյ խօսքը քարոզելով, փրկութեան պատգամը փոխանցելով, չքաւորին եւ կարիքաւորին հասնելով, ինչպէս նաեւ

աշխարհի անարդարության եւ յատկապէս եկեղեցւոյ միջավայրին մէջ անիրաւութիւններուն դէմ պայքարելով:

Եկեղեցին այսպիսով կը պատրաստէ հաւատքով անաժ քրիստոնեաներ, որոնք իրենց հերթին, աշխարհին մէջ որպէս աղ եւ լոյս կը գործեն: Անոնք իրենց շրջանակին մէջ Աւետարանին պատգամը փոխանցելով կը տարածեն Յիսուսի լոյսը, որ կեանքին իմաստ եւ նպատակ կու տայ, ինչպէս աղը ճաշին կու տայ համ:



Առաջին դարերու Եկեղեցւոյ Հայրերը* մարդ արարածը նկարագրած են որպէս մանրաշխարհ [microcosm], բացայայտելով մարդուն խոր առնչութիւնը ստեղծագործութեան հետ. այրպիսով անոնք շեշտած են ամբողջ

* «Եկեղեցւոյ Հայրերը» կը մատնանշէ 2րդ-5րդ դարերու Եկեղեցւոյ ուսուցիչներն ու աստուածաբանները: Այս գործին մէջ յատկապէս Արեւելեան (լոյն) Հայրերը նկատի առնուած են, ինչպէս Երանոս Լիոնացի, Կղեմէս, Ռոգոյինէս եւ Կապադովկիացի Հայրերը:

ստեղծագործութեան կարենորութիւնը եւ մարդուն կողմէ ակնկալուած հոգատարութիւնը ստեղծագործութեան հանդէպ: Այս հասկացողութեամբ, մարդ արարած ստեղծագործութեան գլուխն է, ինչպէս Յիսուս Եկեղեցիին գլուխն է: Ուրեմն, մարդուն կ'իյնայ ստեղծագործութեան հանդէպ պատասխատուութիւն, եւ որպէս Եկեղեցիին մէկ անդամը՝ հաւատարմութիւն իր Տիրոջ Յիսուս Քրիստոսին հանդէպ, որն է գլուխը Եկեղեցիին:

Այս է Տիեզերական Եկեղեցին, այսինքն Քրիստոսի խորհրդաւոր մարմինը, որուն անդամներն են աշխարհի վրայ տարածուած տարբեր եկեղեցիները:[†]



[†] Եկեղեցի բառը այս հատորին մէջ երկու տարբեր գործածութիւններ ունի. առաջինը՝ Ընդհանրական Եկեղեցին, որ աշխարհի բոլոր հաւատացեալներուն խորհրդաւոր միութիւնն է, որ դարձեալ կարելի է կոչել Քրիստոսի խորհրդաւոր մարմինը (The Mystical Body of Christ), որուն անդամներն են բոլոր հաւատացեալները: Բառին երկրորդ գործածութիւնը կը մատնանշէ տարբեր եկեղեցիներ տարբեր վայրերու մէջ: Առաջինին պարագային եկեղեցի բառը կը գրուի գլխատառ «ե»ով, իսկ երկրորդին՝ փոքր «ե»ով: Երբ խօսքը յատուկ եկեղեցիի մը մասին է դարձեալ գլխագիր սկզբնատառ կը գործածուի:

2. Յիսուս եւ իր Աշակերտները

Նազովրեցի Յիսուս (4 Ք.ա. – 30 Ք.ե.)

Նազովրեցի Յիսուս կը ծնի Պաղեստինի Բեթլեհեմ քաղաքին մէջ, Հերովդէս Մեծ կայսրի (73–4 Ք.ա.) օրերուն (հմմտ.՝ Մտ. 2.1; 19): Ան կ'ապրի Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ որպէս հաւատարիմ հրեայ: Իր կեանքին ընթացքին ան կը պահէ եւ կը գործադրէ Օրէնքը, Փարիսեցիներուն նման, սակայն Օրէնքին կու տայ իր իրական եւ ամբողջական իմաստը: 27-28 թ.ին Յիսուս կը մկրտուի Յովհաննէս Մկրտիչէն եւ մկրտութեամբ կը սկսի իր առաքելութիւնը, որ 2-3 տարի կը տեւէ: Մկրտութենէն ետք ան կ'ընտրէ քանի մը աշակերտներ, որոնց հետ մէկտեղ Աստուծոյ Թագաւորութեան մասին կը քարոզէ խօսքով եւ մանաւանդ գործով եւ կեանքով:

Իր կեանքին ընթացքին ինք բան մը չէ գրած, սակայն իր մասին շատ գրութիւններ կան: Իր կեանքին, քարոզութեան եւ խօսքերուն վրայ հիմնուած է ամբողջ Քրիստոնէական հաւատքը, որ ունի մեծ թիւով հետեւորդներ աշխարհի տարբեր կողմերը:

Հրէական իշխանութիւններ կը դատաւարտեն զինք, եւ հռոմէացիներու կողմէ կը խաչուի մօտ 30 թ.ին Երուսաղէմի մէջ: Աշակերտները, անոր մահէն ետք, դարձեալ կը հաւաքուին Երուսաղէմի մէջ այն հաւատքով որ հիմնուած էր իրենց անձնական փորձառութեան վրայ, ու համոզումով, որ Աստուած Յիսուսը մեռելներէն յարուցանեց:

Յիսուսի աշակերտները եւ Աւետարանին տարածումը

Յիսուսի յարութեամբ աշակերտները սկսան հասկնալ եւ վերարժեւորել անոր անցեալի խօսքերը եւ գործերը: Անոնք կը քաջալերուին եւ Ս. Հոգին ստանալով կը դառնան իր վկաները: Անոնք Երուսաղէմի մէջ հաւաքուելով, բաւական ժամանակ կը մնան հրէական միաբանութեան մէջ, որպէս անոր մէկ բաժանումը եւ ոչ՝ որպէս նոր կրօնք: Աշակերտները կը շարունակեն Տաճար յաճախել եւ օրէնքները պահել: Այս առաջին հաւատացեալները մեծ մասամբ Պաղեստինի հրեաներէն էին, որոնք սկիզբէն կոչուեցան սուրբեր (Հո.15.25), ինչպէս նաեւ «εκκλησια» [Ekklesia] որ հաւաքի կամ եկեղեցիի իմաստը ունի:

Եկեղեցին կը մեծնայ եւ կը հալածուի

Առաջին հաւատացեալներու խումբին կ'աւելնան ուրիշ առաքեալներ, ինչպէս Բառնաբաս, եօթը օգնականներ Ստեփանոսի եւ Փիլիպպոսի հետ, ինչպէս նաեւ Պօղոս: Գրծ.4ի մէջ կը կարդանք թէ առաքեալները Յիսուսի յարութեան, ինչպէս նաեւ ապաշխարութեան մասին քարոզելով, նեղութիւններու կը հանդիպին եւ կը հալածուին: Սակայն առաքեալները այս ամէնուն կը տոկան եւ իրենց առաքելութիւնը կը շարունակեն խաչեալ Յիսուսին շնորհքով եւ զօրութեամբ: Պետրոս, խօսքը ուղղելով հրեաներուն, կ'ըսէ բժշկուած կաղին մասին: «... Նազովրեցի Յիսուս Քրիստոսին անունովը, որ դուք խաչեցիք եւ որ Աստուած մեռելներէն յարուցանեց, ահա անով ասիկա ձեր առջեւ բժշկուած կեցեր է» (Գրծ.4.10):

Գրծ. 7-8 գլուխներուն մէջ կը կարդանք Ստեփանոսի քարկոծուելուն մասին եւ թէ «այն օրը մեծ հալածանք եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին դէմ»: Այս հալածանքին իբր արդիւնք շատ մը հաւատացեալներ ցիրուցան եղան, բացի առաքեալներէն, «սակայն ցիրուցան եղածները կը պտըտէին եւ խօսքը կը քարո-

զէին» (Գրծ.8.4): Անոնք մինչեւ Սամարիա, Փիւնիկէ, Կիպրոս եւ Անտիոք հասան (Գրծ.11.19): Անտիոքի մէջ կը հիմնուի Առաջին Եկեղեցին, ուր հեթանոսներ եւ հրեաներ միասին կը հաւաքուէին:

Երուսաղէմի հաւատացեալները որոշ չափով խաղաղութիւն կը վայելեն մինչեւ 41 թ., երբ նոր կայսր մը՝ Կլաւդիոս* կը Գահակալէ: Ան Յովհաննէսի եղբոր՝ Յակոբոսը մահապատիժի կը դատապարտէ, նաեւ Պետրոսը կը բանտարկէ: Երուսաղէմի հաւատացեալներուն առաջնորդութիւնը կը յանձնուի Յակոբոսին (Յիսուսի եղբայրը), մինչեւ անոր նահատակուիլը՝ 63 թ.ին:

* Յիսուս կը ծնի Օգոստոս կայսրին օրերուն, որն էր Հռոմէական Կայսրութեան հիմնադիրն ու անոր առաջին կայսրը. (27 Ք.ա.-14 Ք.ե.): Օգոստոս Կայսրին յաջորդող տասը կայսրերը հետեւեալներն էին.- Տիբերիոս (14 Ք.ա.-37 Ք.ե., իր օրերուն Քրիստոս մեռաւ), Կալիգուլա (37-41 Ք.ե.), Կլաւդիոս (41-54, ան հրեաները Հռոմէն վտարեց), Ներոն (54-68 Ք.ե.), Կալպա, Օրօ, Վիդիլիոս, Վէսպազեան եւ Տրտոս (կ'իշխեն յաջորդաբար 68-81 Ք.ե.) եւ Դոմենտիանոս (81-96, Քրիստոնէութեան ամենադաժան հալածողը, որուն օրերուն Յայտնութիւն Յովհաննու գիրքը արձանագրուած է): Արեւմտեան Հռոմէական Կայսրութիւնը կ'իշխէ 27 Ք.ա.-476 Ք.ե., իսկ Արեւելեան (Բիւզանդական) Կայսրութիւնը կ'իշխէ 330-1453 թ.ին:



Ներկայիս քրիստոնեաներ անպայման Յիսուսի եւ իր աշակերտներուն նման չեն հալածուիր. սակայն ճշմարտութիւնը կը մնայ, թէ Յիսուսի հաւատարիմ հետեւորդները միշտ ալ դժուարութիւններու եւ նեղութիւններու կը հանդիպին: Անոնք, սովորական կեանքի նեղութիւններուն կողքին, յօժարութեամբ պատասխանատուութիւնը կը ստանձնեն Աստուծոյ Խօսքը սերմանելու եւ կը պայքարին արդարութիւն ու յոյս բերելու իրենց գտնուած միջավայրին մէջ: Այս է Աւետարանին մարտահրաւէրը՝ Շշմարտութեան համեմատ խօսիլ եւ գործել, եւ կեանքով անոր վկաները ըլլալ:



3. Պօղոս Առաքելի Առաքելությունը և Առաջին Դարու Եկեղեցիներ

Պօղոս առաքել (մօտ. 5-66)

Պօղոս, որ Աստուծաշունչին մէջ կոչուած է նաեւ Սօղոս, հրեայ փարիսեցի մըն էր, Կիլիկիոյ Տարսուսի քաղաքին մէջ ծնած: Երուսաղէմ գալով եւ Գամաղիէլի աշակերտ ըլլալով, ան ստացած էր հրէական կրթութիւն եւ սորված էր օրէնքները (Գրծ. 22.3-5; Փլ. 3.6): Ան իր հրէական հաւատքին հանդէպ նախանձախնդիր ըլլալով, հալածած էր քրիստոնէաները (մօտ. 33-34 թ.) եւ զանոնք բանտարկութեան եւ նոյնիսկ մահուան մատնած էր (Գրծ. 8.1-3):

Պօղոս առաքել մօտ 34 թ.ին կ'ունենայ յատուկ փորձառութիւն մը, որ իր կեանքը ամբողջովին կը փոխէ: Յարուցեալ Քրիստոս յայտնուելով Պօղոսի, անոր առաքելութիւնը կը վստահի հեթանոսներուն մէջ գործելու (Գրծ. 9:1-19): Պօղոս


Առաքել, տարբեր ճամբորդութիւններէ ետք, իր առաքելութիւնը կը սկսի Սուրիոյ եւ Կիլիկիոյ քաղաքներուն մէջ եկեղեցիներ հիմնելով: Ան, Բառնաբասի ընկերակցութեամբ, Անտիոքէն կ'նողոտի դէպի Սելեւկիա, Կիպրոս, Սաղամինա, Պափոս, Պերգէ, Պրիսիդիայի Անտիոքը, Իկոնիոն եւ Դերբէ ապա կը վերա-



դառնայ դէպի Սուրիոյ Անտիոքը:

Այս Պողոս առաքելային առաջին առաքելական ճամբորդութիւնն էր , որ յիշուած է Գրծ.13-14-ի մէջ եւ տեղի ունեցած է մօտ. 48 թ.ին:

Մօտ. 49 թ.ին, Առաքելը Բառնաբասի հետ կ'ուղղուի դէպի Երուսաղէմ, ուր ժողով մը տեղի կ'ունենայ (Գրծ.15.1-29): Այդ ժողովին հիմնական հարցն էր՝ թէ հեթանոսները արդեօ՞ք պէտք ունէին հրէական Օրէնքը պահելու, որպէսզի քրիստոնէայ դառնային: Երուսաղէմի այս ժողովին ընթացքին կ'որոշուի եւ կը յայտարարուի թէ Աւետարանը բոլորին համար է, թէ՛ հրեայ եւ թէ՛ հեթանոս. քրիստոնէաներ այլեւս Օրէնքի տակ չեն, այլ փրկութիւնը հաւատքով է:




Այս ժողովէն ետք Պողոս եւ Բառնաբաս (Սուրիոյ) Անտիոք կը վերադառնան: Հոն անհամաձայնութիւն մը տեղի կ'ունենայ Պետրոսի եւ Պողոսի միջեւ, որուն

արդիւնքով Բառնաբաս Պետրոսի կը միանայ, իսկ Պօղոս, իր յաջորդ առաքելական ճամբորդութեան ուղեկից կ'ընտրէ Ծիղան:

Ուրեմն, երկրորդ առաքելական ճամբորդութեան, (մօտ. 50-52 թ.) Պօղոս առաքեալ, Ծիղայի ընկերակցութեամբ, կ'ուղղուի դէպի Գաղատիա, ետքը Փոքր Ասիան ձգելով, կը հասնի մինչեւ Մակեդոնիա (Գրծ. 15. 36-18. 22):

Անոնք եկեղեցիներ կը հիմնեն Փիլիպպէի եւ Թեսաղոնիկէի մէջ, ուրկէ կ'ուղղուին Աթէնք, Կորնթոս (ուր Պօղոս հաւանաբար կը գրէ Գաղատացիներուն եւ Թեսաղոնիկեցիներուն ուղղուած նամակները), ապա կ'երթան Եփեսոս, որմէ ետք կը վերադառնան Պաղեստին:

Ժամանակ մը ետք, դարձեալ Եփեսոս երթալով, Պօղոս առաքեալ կը մնայ հոն քանի մը տարիներ, որոնց ընթացքին կը գրէ Կորնթացիներուն ուղղուած նամակները, ապա կը ճամբորդէ դէպի Մակեդոնիա եւ Յունաստան,



ուր կը գրէ հոռոմէացիներուն ուղղուած նամակը: Անցնելով Տրովադայէն, Ասոնէն, Սամոսէն եւ Մելիտոսէն, Պօղոս կը վերադառնայ Կեսարիա, ապա՝ Երուսաղէմ: Ասիկա երրորդ առաքելական ճամբորդութիւնն էր (Գրծ. 18:23-20.38), որմէ ետք Երուսաղէմի Տանարին մէջ կը ձերբակալուի եւ իրարանցում պատճառելով Հռոմէական իշխանութեան կը յանձնուի: Պօղոս առաքեալ, մօտ 60 թ.ին կը բանտարկուի Կեսարիոյ մէջ, որմէ ետք կը տարուի Հռոմ: Հռոմի մէջ իր բանտարկութեան շրջանին կը գրէ Եփեսացիներուն, Փիլիպպեցիներուն, Կողոսացիներուն, Փիլիմոնին, Տիմոթէոսին (առաջին) եւ Տիտոսին ուղղուած նամակները: Ըստ աւանդութեան ան 65-67ի միջեւ Հռոմի մէջ մահապատիժի կը դատապարտուի:

Պօղոսին նամակները եւ պատգամը

Պօղոս առաքելի նամակները կը կազմեն Նոր Կտակարանի առաջին գրութիւնները: Պօղոսին առաքելութիւնը հիմնականօրէն ուղղուած էր հեթանոսներուն: Իր բուն պատգամն էր Տէր Յիսուսի բերած փրկութիւնը որ բոլոր մարդոց համար է: Փրկութիւն ունենալու համար, մարդիկ պէտք չունին Օրէնքը պահելու. փրկութիւնը գործերով չէ, այլ՝ հաւատքով, այսինքն վստահելով Յիսուսի խօսքերուն: Հաւատացեալներ Յիսուսի հետ մէկ կ'ըլլան, այն իմաստով որ անոնք կը բաժնեկցին Յիսուսի մահն ու յարութիւնը, եւ այս մէկը հաւատացեալներուն կեանքերը ամբողջովին կը փոխէ:



«Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար...» (Հն.6.4):

«Արդ՝ եթէ մենք Քրիստոսին հետ մեռանք, կը հաւատանք թէ անոր հետ պիտի ապրինք ալ» (Հն.6.8):

Հաւատացեալներ իրենց կեանքերուն մէջ կը վերապրին Յիսուս Քրիստոսի մահն ու յարութիւնը եւ կը շարունակեն անոր եւ առաքեալներուն առաքելութիւնը իրենց գտնուած վայրերուն մէջ:



Բ. Ա.-Գ. Դարերու Եկեղեցին

4. Եկեղեցին Տարածումը

Առաջին երեք դարերու ընթացքին Եկեղեցին կը մեծնայ եւ կը տարածուի հսկանալի տեսակաւոր հալածանքներու եւ դժուարութիւններու: Հռոմէական Կայսրութեան կողմէ Քրիստոնէութիւնը որպէս կրօնք ընդունուած չէր, ոչ ալ՝ Պաղեստինի հրեաներուն կողմէ: Սակայն քրիստոնէաներ հաւատքով եւ վստահութեամբ կը շարունակեն հաւատարիմ մնալ իրենց հաւատքին եւ առաքելութեան:

Եկեղեցին Հռոմի մէջ

Հռոմի մէջ, հաւատացեալներու խումբը ընդունուած չէր իշխանութեան եւ հանրութեան կողմէ: Երբ 64 թ.ին, Ներոն կայսրին օրերուն, մեծ հրդեհ մը տեղի ունենայ, քրիստոնէաներ կը մեղադրուին եւ շատեր մահապատիժի կ'արժանանան:

Հրէաստանի մէջ

66-67ի միջեւ հրեաներ կ'ապստամբին հռոմէական իշխանութեան դէմ, որուն պատճառով Տաճարը կը հրկիզուի եւ Երուսաղէմ կը քանդուի, 70 թ.ին, Հռոմէական իշխանութիւններու կողմէ: Հրեաներուն ապստամբութեան ընթացքին քրիստոնէաներուն դերը կը մնայ չէզոք: Քրիստոնէաներուն այս կեցուածքին, նաեւ իրենց այլ դաւանանքներուն պատճառով, առաջին դարու վերջաւորութեան, հրեաներ կը հաւաքուին (Ճամնիա քաղաքին մէջ, Պաղեստինեան ծովափի վրայ) եւ կը համաձայնին արգիլել քրիստոնէաներու մասնակցութիւնը իրենց արարողութիւններուն: Այս մէկը հրեաներուն եւ քրիստոնէաներուն միջեւ յստակ բաժանում կը պատճառէ եւ այսպիսով, Եկեղեցին կը բաժնուի հրէութենէն:

Եկեղեցին կը մեծնայ

100 թ.ին Քրիստոնեությունը արդեն ներկայ էր Փոքր Ասիոյ, Սուրիոյ, Մակեդոնիոյ, Յունաստանի եւ Հռոմ քաղաքին մէջ: Քրիստոնեաներ, հսկառակ հալածանքներու, կանոնաւոր ձեռով կը հաւաքուէին ունենալու իրենց պաշտամունքները: Իւրաքանչիւր եկեղեցի ունէր իր եպիսկոպոսը, երէցները եւ սարկաւազները: Եկեղեցին նաեւ ունէր յատուկ ծառայութիւններ աղքատներուն եւ որբերուն համար:

Եկեղեցին մեծնալով ու տարածուելով, քրիստոնեաներ տարբեր ձեւերով կը սկսին արտայայտել իրենց հաւատքը: Զանազան առաջնորդներու տարբեր մեկնաբանութեանց պատճառաւ, 2րդ դարու սկիզբը կը շեշտուի առաքելական յաջորդութեան կարեւորութիւնը որպէս հեղինակաւոր աղբիւր եկեղեցւոյ առաջնորդութեան: Այս կը նշանակէր թէ եկեղեցիին առաջնորդներուն հեղինակութիւնը գոնէ մասամբ գալու էր առաքեալներուն հեղինակութենէ (Պետրոս կամ Պօղոս), սերունդէ սերունդ փոխանցուած (Մտ.16.16-19): Ատենի Հռոմի Եկեղեցին կը նկատէր իր երէց եպիսկոպոսները որպէս առաքեալներուն յաջորդները:



Իրականությունն է թե՛ Քրիստոսին լոյսը կարելի չէ պահել: Որքան ալ պարագաներն ու տազնապներ արգելք դառնան եւ նույնիսկ ջանան զայն խաւարի մէջ պահել, Քրիստոսի լոյսը, որն է ճշմարտութեան լոյսը, դարձեալ անկհինէ մը կը ծագի եւ կը լուսաւորէ շրջակայքը: Անոնք որոնք արդէն իրենց կեանքերէն ներս վայելած են Քրիստոսին լոյսը, որ մարդուն միտքն ու հոգին կը շողացնէ, յատուկ առաքելութիւն ունին տարածելու այդ լոյսը, որպէսզի ուրիշներ ալ զայն ունենալով Աստուծոյ Թագաւորութիւնը տիրէ բոլոր մարդոց կեանքերէն ներս:



5. ՎԷՃ ԳՆՈՍՏԻԿՆԵՐՈՒ ՀԵՍ

Որո՞նք էին Գնոստիկները

130-160ի միջև ի յայտ կու գայ վիճաբանություն մը՝ Գնոստիկեան աղանդի եւ եկեղեցական առաջնորդներու միջև: Գնոստիկները իրենց անունը ստացած են [gnosis] բառէն, որ յունարէն կը նշանակէ գիտութիւն: Գնոստիկեան աղանդը կրօնական շարժում մըն էր, որ 2րդ դարուն շրջան մը առնչուելով Քրիստոնէութեան հետ, նոյն դարու վերջաորութեան կը բաժնուի անկէ: Այս շարժման ճիւղաորումներէն մէկը մինչեւ այսօր կը շարունակուի Միջագետքի շրջանին մէջ:

Գնոստիկները կը հաւատային թէ իրենք ունին յատուկ եւ գաղտնի գիտութիւն, որ սովորական մարդիկ չեն կրնար իւրացնել: Այս գիտութիւնը ոմանց կը յայտնուէր աստուածային միջոցներով եւ անոնց կը փոխանցէր կեանքի եւ մարդկութեան սկիզբին ու ճակատագրին մասին տեղեկութիւններ: Գնոստիկներ իրենք զիրենք կը նկատէին տարբեր գիտութեան, լոյսի եւ հոգիի աշխարհէ եկողներ, որոնք կ'ապրին այս սխալական, ստորադաս եւ նիւթական աշխարհին մէջ: Այս երկու աշխարհները թէւ համատեղ, սակայն հակասական են, քանի որ իւրաքանչիւրը ունի Աստուծոյ իր տարբեր հասկացողութիւնը:

Գնոստիկներ կը գործածէին Աստուածաշունչը, սակայն տարբեր բացատրութիւններ կու տային անոր գրութիւններուն, ինչ որ չէր համեմատեր քրիստոնէական ուսուցմունքներուն: Յիսուս, ըստ իրենց, եկաւ այս աշխարհ որոշ գիտութիւն փոխանցելու: Ան չապրեցաւ եւ չմեռաւ իբր մարդ, այլ որոշ շրջանի մը համար ստացաւ երեւելի մարդկային մարմին մը:

Ինչո՞վ կը տարբերին քրիստոնեական ուսուցմունքները

Նոր Կտակարանի վերջին գրությունները արդեն կը յիշեն սխալ ուսուցմունքներու այս վտանգը: Եկեղեցիի առաջնորդներ Գնոստիկներու այս շարժումը նկատեցին հերետիկոսական շարժում: Ըստ Քրիստոնեական հաւատքին, Աստուած միակ, ճշմարիտ եւ կեանք տուող Աստուածն է: Իր ստեղծած նիւթական աշխարհը բարի է, ինչպէս նաեւ մարդիկ Աստուծոյ պատկերով ստեղծուած են: Տէր Յիսուս ծնաւ, ապրեցաւ, մեռաւ իբրեւ մարդ եւ մանաւանդ յարեաւ՝ մարդուն շնորհելու փրկութիւն եւ կեանք:



Աստուած մարդ արարածը իր պատկերով ստեղծած է. դարերու ընթացքին աստուածաբաններ Սբ. Գրային այս իրողութիւնը տարբեր ձեւերով բացատրած են: Առաջին դարերու Եկեղեցոյ Հայրերը եւ ուրիշներ շեշտած են մարդուն ազատութիւնը որպէս Աստուծոյ պատկերին իրականացումը, այսինքն մարդուն տրուած կարելիութիւնը ըլլալու ազատ՝ մեղքէ, ազատ՝ իր անձնական վախերէն,

ազատ՝ անցեալի ճնշումէն եւ ապագայի մտահոգութիւններէն:

Ուրիշ բացատրութիւն մը կու գայ միջնադարեան աստուածաբաններէն, որոնք շեշտած են մարդուն միտքը եւ տրամաբանելու կարողութիւնը, ինչպէս նաեւ ճշմարտութիւնը գիտնալու եւ զԱստուած ճանչնալու մարդուն կարողութիւնը որպէս Աստուծոյ պատկերին հրականացումը իր մէջ:

Մարդուն կրած աստուածային պատկերին վերոնշեալ երկու տարբեր բացատրութիւնները դէմ են Գնոստիկներու սորվեցուցած վարդապետութիւններուն: Աստուած ոմանք ընտրելով անոնց իրայատուկ կարողութիւններ չի տար: Աստուած «մարդը» իր պատկերով ստեղծեց. այսինքն իւրաքանչիւրիս տրուած է գիտութեան եւ ազատութեան ընթացքին մէջ ըլլալու հնարաւորութիւնը:



6. Քրիստոնէական Հաւատքի Պաշտպան՝ Յուստինոս Վկայ

Պատմական ակնարկ

Առաջին դարերու քրիստոնէաներ կը հալածուին Հռոմէական իշխանութեան կողմէ, եւ կը մեղադրուին որպէս կայսրին անհնազանդ, ինչպէս նաեւ չաստուածները անարգող:

Անոնցմէ շատեր կը բանտարկուին եւ ուրիշներ կը նահատակուին իրենց հաւատքին պատճառով: Եւրոպայի փոխտփայներ նաեւ կը քննադատեն Քրիստոնէութիւնը: Այս բոլորին իբր արդիւնք քրիստոնէայ գրագէտներ 120-220ի միջեւ կը սկսին գիրով բացատրելու եւ պաշտպանելու իրենց հաւատքը: Այս գրական ոճը կը կոչուի՝ Ջատագովութիւն [Apologetics]:

Յուստինոս Վկայ (103-165)

Յուստինոս Վկայ [Justin Martyr] եղած է քրիստոնէայ փոխտփայ մը եւ 130-180ի միջեւ անուանի գրողներէն մէկը: Ան նախ կը պաշտպանէ քրիստոնէաները անոնց ուղղուած ոճիրներուն դէմ, ինչպէս նաեւ կը բացատրէ Քրիստոնէական հաւատքը բանական եւ հասկնալի ոճով:

Մօտ 100 տարի անցած էր Յիսուսի ծնունդին, եւ ահա Սամարիոյ մէջ (որ կը գտնուէր Յուդայի եւ Գալիլիոյ միջեւ) Յուստինոս իր աչքերը կը բանայ հեթանոս ընտանիքի մը մէջ: Մեծնալով, անոր մէջ կ'աւելնար ուսումի եւ գիտութեան տենջը:



Յուստինոս, իր երիտասարդ տարիքին կ'որոշէ ճամբորդել յագեցնելու համար ճշմարտութեան իր ծարարը: Իր փնտրտութիւն մէջ ան կը հանդիպի հրեաներու, որոնք կը ջանան սիրաշահիլ զինք իրենց օրէնքներով, սակայն ի զուր կը փորձեն: Ան նաեւ կը հանդիպի քրիստոնէաներու, որոնց թիւը օրէ-օր կ'աւելնար հսկառակ այն խիստ հալածանքին, որուն կենթարկուէին կայսրին կողմէ: Քրիստոնէաներ մեծ ազդեցութիւն կ'ունենան Յուստինոսին վրայ:

Երբ Յուստինոս կը հասնի Եփեսոս, հոն առաւել եւս կը տեսնէ քրիստոնէաներու խոր հաւատքը Յիսուսի հանդէպ, ինչպէս նաեւ իրենց հաւատարմութիւնն ու սէրը՝ իրարու հանդէպ, այս մէկը կ'օգնէ որ իր երիտասարդ տարիքէն ան ընդունի խաչեալ Քրիստոսին կրօնքը:

Յուստինոս Վկան փիլիսոփայական ոճով կը սորվեցնէր Քրիստոնէութեան մասին: Անոր ունկնդրողներուն թիւը մեծ էր (թէ՛ հրեաներէն եւ թէ՛ հեթանոսներէն), որոնք կը խուժէին իր խօսքը մտիկ ընելու եւ նոյնիսկ իրեն հետ վիճելու, հաւատքի հարցերու շուրջ: Ան տեղէ տեղ փոխադրուելէ ետք կը հաստատուի Հռոմ: 138 թուին հալածանքը կը զօրանայ քրիստոնէաներուն դէմ, որուն արդիւնքով Յուստինոս կը սկսի իր ջատագովական եւ պաշպանողական գրութիւնները, եւ կ'ուղղէ զանոնք կայսրին, բողոքելով քրիստոնէաներուն հանդէպ կայսրութեան մէջ կատարուած անգթութիւններուն մասին:

Հռոմի սոսկալի օրերէն մէկն էր երբ հռոմէացի կուսակալ մը կը սպաննէ երեք քրիստոնէաներ առանց որեւէ դատապարտումի: Այդ երեքը ոչ մէկ սխալ գործած էին, արդար եւ ուղղամիտ մարդիկ էին: Յուստինոս Վկայ իր վրայ կ'առնէ այս հարցը եւ խնդրագիր մը կը գրէ ուղղուած կայսրին, որուն մէջ կը պաշտպանէ Քրիստոնէական Հաւատքը եւ կը խնդրէ կայսրին միջամտութիւնը: Սակայն հալածանքը կը շարունակուի, եւ վերջապէս անոր զոհերէն մէկը կը դառնայ նոյնիւնք՝ Յուստինոս Վկայ:

165 թ.ին, քրիստոնեայ փիլիսոփան իր բարեկամներուն հետ մէկտեղ կը ձերբակալուի: Գլխատումէն առաջ կ'առաջարկուի իրենց ընդունիլ հեթանոսական կրօնք մը, որպէսզի հաստատ մահէ փրկուին, սակայն անոնք մինչեւ վերջ հաւատարիմ կը մնան իրենց հաւատքին, արտասանելով այս խօսքերը՝ «Մենք քրիստոնեաներ ենք, թող Աստուծոյ կամքը ըլլայ»:



Յուստինոս Վկայ սորվեցուցած է «λογος» [Logos]ին մասին, որ կը թարգմանուի «Խօսք» կամ «Բան»: «Բան» բառը Քրիստոնէութենէ առաջ, յունական փիլիսոփայութեան մէջ տարբեր նշանակութիւններ ունեցած է՝ բանականութիւն, պատճառ, փաստարկ, իմաստ, նպատակ եւ տրամաբանութիւն: Յուստինոս Վկայ այս նոյն խորհուրդը յարմարցուցած է Աստուծոյ Խօսքին, որ, ըստ իրեն, սերմանուած կամ սփռուած է ամբողջ ստեղծագործութեան տարածքին վրայ [logos spermatikos]: Այս սերմանուած խօսքին կատարելագոյն արտայայտութիւնը եղած է սակայն Յիսուս Քրիստոս ինք:

«λογος» ի այս խորհուրդը նման է Աստուծոյ պատկերին նշանակութեան, որուն համեմատ մարդ արարած ստեղծուած է, եւ որուն միջոցով մարդուն տրուած է զԱստուած եւ անոր կամօքը գիտնալու կարելիութիւնը:



7. Յտուակեցնել Քրիստոնէական Դաւանանքները

Քրիստոնէական ճիշդ ուսուցմունքներ ստանալու համար յատուկ ջանք թափելու ենք: Այս մէկը անհրաժեշտ է որպէսզի դաւանանք իսկական քրիստոնեաներ, ոչ միայն՝ թուղթով կամ անունով: Աստուածաշունչ կարդալ, եկեղեցի յաճախել եւ Աստուծոյ Խօսքին որոշ բացատրութիւններուն մտիկ ընելը կրնան օգնել մեզի հաստատելու ճիշդ հաւատքին հիմերը:

Քրիստոնէական հաւատքը հիմնուած է Տէր Յիսուս Քրիստոսի վրայ. սակայն հասկնալու համար թէ ինչ ըսել է Յիսուսի Խօսքերուն վստահիլ, պէտք ունինք ուղղութեան: Եկեղեցին իր գիտակներուն աշխատանքներուն միջոցով կը ջանայ բացատրել Քրիստոնէական Հաւատքին իմաստը իւրաքանչիւր սերունդի:

Մարկիոն եւ իր ուսուցմունքները

Առաջին եւ 2րդ դարերուն, երբ տակաւին քրիստոնեաներ չունէին յստակ Սբ. Գրային գրութիւններ, շատեր սկսան սխալ ձեւերով մեկնաբանել եւ սորվեցնել Քրիստոնէութիւնը: Մարկիոն [Marcion] անունով մէկը, մօտաւորապէս 139 թ.ին, կը սկսի սորվեցնել իր անձնական համոզումը եւ հասկացողութիւնը Քրիստոնէութեան մասին: Ան կը հաւատար թէ կային երկու աստուածներ, մէկը՝ բարի, իսկ միւր՝ չար, մէկը՝ հոգեւոր, իսկ միւր՝ նիւթական, մէկը՝ սիրող, իսկ միւր՝ ատող: Ուրեմն Յիսուս կը ներկայացնէր սիրոյ Աստուածը, իսկ Հին Ուխտի ստեղծագործ Աստուածը՝ չար Աստուածն էր: Հետեւաբար, ըստ Մարկիոնին, Աստուածաշունչը պէտք է մաքրուէր Հին Ուխտի Աստուծոյ հետքերէն: Այս մօտեցումին արդիւնքով Մարկիոն ունէր իր յատուկ գիրքերու ընտրութիւնը, որ համապատասխան չէր

Եկեղեցիին ուսուցմունքներուն: Ան 144 թ.ին Եկեղեցույ կողմէ կը բանադրուի:[‡]

Նոր Կտակարանին կանոնականացումը

Մարկիոնի այս գաղափարները Եկեղեցին մարտահրաւերի մը առջեւ դրին որոշելու, թէ ո՞ր գրութիւնները հեղինակաւոր գրութիւններ են: Հետեւաբար ի յայտ եկաւ Նոր Ուխտի կարգաւորման խնդիրը, որ կը կոչուի Նոր Կտակարանի կանոնականացում: Կանոնականացում բառը յառաջ եկած է յունարէն «κανων» [Canon] բառէն, որ կու գայ սեմական արմատէ եւ կը նշանակէ՝ չափանիշ: Ուրեմն կանոնականացումը տարբեր գրութիւններէ որոշ գիրքերու ընտրութեան ընթացքն է, որոնք մաս պիտի կազմէին Աստուածաշունչին գրութիւններուն. անոնք, իրենց պարունակութեամբ, համապատասխան ըլլալու էին առաքելական վկայութեան: Այս խորհրդակցութիւնները սկսան 2րդ դարուն. նոյն դարուն վերջաւորութեան, արդէն իսկ Նոր Կտակարանին բոլոր գիրքերը, բացի եօթը գիրքերէ (Եբրայեցիս, Բ. եւ Գ. Յովհաննու, Բ. Պետրոսի, Յուդայի, Յակոբբու եւ Յայտնութիւն Յովհաննու) արդէն իսկ ընդունուած էին որպէս առաքելական գրութիւններ: 2րորդ դարու վերջաւորութեան Նոր Կտակարանի բոլոր գիրքերը ընդունուած էին Արեւմտեան եկեղեցիներուն կողմէն: Արեւելեան Եկեղեցին, նաեւ 500 թ.ին ընդունեց Նոր Կտակարանի բոլոր գիրքերը, որպէս առաքելական վկայութիւն:

[‡] Տարբեր եկեղեցական իշխանութիւններ, պատմութեան ընթացքին, բանադրած են տարբեր անհատներ կամ խումբեր, այսինքն իրենց հետ հաղորդակցութենէ զրկած են զանոնք (ex-communicate), նկատելով թէ այդ անհատին կամ խումբին հաւատքի ուսուցումը չի համապատասխաներ եկեղեցական իշխանութեան վարդապետութեան:

Ուրեմն, Նոր Կտակարանի կանոնով ըսել կ'ուզենք գիրքերու այն ցանկը, որ ընդունուած է եկեղեցական համաձայնութեան հիման վրայ, որպէս վերջնական, հեղինակաւոր, եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած գրութիւններ պարունակող:

Բերանացի Դաւանանքներ

2րդ դարու վերջաւորութեան, եկեղեցին կ'ունենայ իր հաստատ սկզբունքները եւ վարդապետութիւնները: Աստուածաշունչին կողքին նաեւ իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ բերանացի կերպով փոխանցուող իր դաւանանքներն ու ուսուցմունքները, որոնք ընդհանրապէս կ'աւանուէին Պօղոս առաքելի խօսքերէն կամ Աւետարաններէն (օր. Փլպ. 2.5-8):

Մկրտութեան հանգանակը էական տեղ կը գրաւէր, որուն միջոցով անհատը կը ճանչցուէր իբր քրիստոնէայ՝ «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մտ.28.19): Այս բերանացի դաւանանքները 3րդ դարուն կը զարգանան եւ ի յայտ կու գան հաւատքի հանգանակները, ինչպէս Առաքելական Հանգանակը եւ Նիկիական Հանգանակը:

Երանոս Լիոնացի (135-200)

Երանոս [Irenaeus] Փոքր Ասիոյ Զմիւռնիա քաղաքէն էր: Ան գաղթած եւ ուսանած է Հռոմի մէջ, ապա եղած է Լիոնի եկեղեցիին եպիսկոպոսը: Երանոս հիմնականօրէն դէմ դրած է սխալ վարդապետութիւններու (ինչպէս Գնոստիկներուն եւ Մարկիոնի հետեւողներուն ուսուցմունքներուն): Ան շեշտած է եկեղեցական աւանդութիւններուն եւ ուսուցմունքներուն կարեւորութիւնը, որպէս ճշմարիտ աղբիւրը Քրիստոնէական հաւատքի:

Իր գրութիւններուն մէջ, Երանոս շեշտած է թէ Աստուած տէրն եւ ստեղծիչն է աշխարհի: Ան մարդացաւ

բոլոր մարդոց փրկութիւն բերելու, եւ իր Հոգիով ներկայ է այս աշխարհին մէջ: Ուրեմն, Աստուծոյ յայտնութիւնը մինչեւ այսօր Ս. Հոգիով կու գայ մարդուն: Երանոս գրած է.- «Կայ միայն մէկ Աստուած, որ սկիզբէն մինչեւ վերջ, տարբեր ձեւերով մարդկութեան օգնութեան համար կու գայ»: նաեւ՝ «Հոն ուր Աստուծոյ Հոգին ներկայ է, ներկայ է նաեւ Եկեղեցին եւ շնորհքի ամբողջութիւնը»:[§]



Պատմութեան ընթացքին Քրիստոնէական դաւանանքներու յստակեցումը էական եղած է Եկեղեցիին համար: Եկեղեցին նաեւ կանոնականացման ընթացքով Աստուածաշունչը կը նկատէ որպէս միակ հեղինակաւոր գրութիւնը, որուն միջոցով Աստուծոյ յայտնութիւնը կու գայ մարդուն: Սակայն Քրիստոնէութեան սկիզբէն իսկ յստակ էր թէ Աստուծոյ յայտնութեան գազաթնակէտը Յիսուս Քրիստոս ինք է: Յիսուս Քրիստոս է Աստուծոյ Խօսքը [Logos], որ մարդացաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

[§] Irenaeus, “Against Heresies”, in A. Roberts & J. Donaldson (eds.), *The Ante-Nicene Fathers: Translations of the Writings of the Fathers Down to A.D. 325*, Vol. 1, (էջ՝458).

Քրիստոնէութեան համար Աստուծոյ Խօսքը ուրեմն գիրքէ մը աւելի է. իսկ Աստուածաշունչը Աստուծոյ Խօսքին (այսինքն Յիսուս Քրիստոսին) մասին կը վկայէ եւ այս իմաստով հաւատացեալին կեանքը կ'ուղղէ եւ անոր դիմաց կը բերէ Յիսուս Քրիստոսին օրինակը:



8. Հոռոմի Եկեղեցին եւ Քրիստոնեաները Հոռոմէական Աշխարհին Մէջ

Հոռոմի Եկեղեցին - յատուկ հեղինակութիւն

Սկիզբէն իսկ, Հոռոմի Եկեղեցին յատուկ տեղ կը գրաւէր այլ եկեղեցիներու շարքին: Առաջին դարու վերջաւորութեան Հոռոմի Եկեղեցին արդէն յատուկ հեղինակութիւն ունէր, որուն սահմանները իր իրաւասութեան սահմաններէն անդին էին: Որոշ տուեալներ կարելի է յիշել բացատրելու համար այս երեւոյթը:

1. Պետրոս եւ Պօղոս առաքեալներ կը մահանան Հոռոմի մէջ, այդպիսով Հոռոմի եկեղեցին անունը յաճախ կ'առնչուի այս երկու առաքեալներուն հետ:

2. Հոռոմ կարեւոր տեղ կը գրաւէ որպէս կայսրութեան մայրաքաղաքը:



Պատկերը կը ներկայացնէ Հոռոմի հին Ս. Պետրոսի եկեղեցին, որ շինուած էր 6-րդ դարուն սկիզբը: Առնուած համացանցէն

3. 2րդ դարուն սկիզբը, Հոռոմի Եկեղեցին թիւով ամէնէն մեծ Եկեղեցին էր:

4. Այս Եկեղեցին յաճախ օգնած է ուրիշ եկեղեցիներու շատ մը քրիստոնեաներ ուրիշ շրջաններու եկեղեցիներէ (Ափրիկէ, Ասիա, Միջին Արեւելք...) գացած են Հոռոմ,

այնպես որ Հոռոմի Եկեղեցին կը հետաքրքրուէր այդ եկեղեցիներուն ալ հարցերով:

5. Ինչպէս ուրիշ եկեղեցիներ, Հոռոմի Եկեղեցին ալ կ'ունենայ իր Եպիսկոպոսը. Հոռոմի Եկեղեցին սակայն կը շեշտէ առաքելական յաջորդութեան կարեւորութիւնը, որ կը նշանակէր թէ եկեղեցիներու Եպիսկոպոսները ունենալու են անպայման Պօղոս կամ Պետրոս առաքեալներէ սերունդէ-սերունդ փոխանցուած հեղինակութիւն: Այս մէկը պատճառ կը դառնայ Հոռոմի Եկեղեցիին կեդրոնաձիգ հեղինակութեան զօրացման, որովհետեւ, ըստ աւանդութեան, երկու առաքեալները Հոռոմի մէջ մահացած էին:

Առաջին եկեղեցական բաժանումները

Եկեղեցիի պատմութեան սկիզբէն իսկ կը կարդանք բաժանումի մասին: Այս բաժանումին իբր օրինակ կարելի է յիշել այն երկար անհամաձայնութիւնը, Հոռոմի Եկեղեցիին եւ Փոքր Ասիոյ եկեղեցիներուն միջեւ, Յարութեան օրը տօնելու թուականին շուրջ: 189-198ի միջեւ Հոռոմի Եկեղեցին ժողովներ կը գումարէ Հոռոմի, Պաղեստինի մէջ, եւ այլուր, պահանջելով միւս եկեղեցիներէն հետեւիլ իր եկեղեցական օրացոյցին եւ սովորութիւններուն: Փոքր Ասիոյ եկեղեցիները մերժելով այս մէկը, Հոռոմի Եպիսկոպոսը կը բանադրէ բոլոր անհամաձայն եկեղեցիները: Այսպիսով պառակտումը կը շեշտուի Հոռոմի Եկեղեցիին եւ Արեւելեան Եկեղեցիներուն միջեւ, որոնք կը մերժեն ենթարկուիլ Հոռոմի եկեղեցական իշխանութեան, եւ հետեւաբար կը զրկուին անոր հետ հաղորդակցութենէ:

Քրիստոնեաներ հռոմէական աշխարհի մէջ՝ յաւելեալ բաժանումներ

Յրդ դարու կիսուն, Հռոմէական Կայսրութիւնը կ'անցնի քաղաքական եւ տնտեսական տագնապներէ: Քրիստոնէութիւնը սկսած էր տարածուիլ Եգիպտոսի, Փոքր Ասիոյ, Սուրիոյ, Հիւսիսային Ափրիկէի եւ Իտալիոյ մէջ: Քրիստոնեաներ գիտէին թէ իրենց Քրիստոնէական Հաւատքը չէր կրնար յարմարիլ հեթանոս եւ կռապաշտ աշխարհի չափանիշներուն:

Այս շրջանին հալածանքը մերթ ընդ մերթ կը զօրանար քրիստոնեաներու հանդէպ: Քրիստոնեաներէն ոմանք զօրաւոր հալածանքի ենթարկուելով կ'որանային իրենց հաւատքը, որուն արդիւնքով անհամաձայնութիւն եւ բաժանում տեղի ունեցաւ եկեղեցիներու միջեւ: Այս անհամաձայնութեան իբր օրինակ կարելի է յիշել Դոնականները, որոնք մաս կը կազմէին Հիւսիսային Ափրիկէի Եկեղեցիին: Անոնք խստապահանջ էին Եկեղեցիին սրբութեան հանդէպ. 4րդ դարու սկիզբը Դոնականները կը բաժնուին եկեղեցիէն, որովհետեւ անհամաձայն կը գտնուին հալածանքներու արդիւնքով իրենց հաւատքը ուրացող քրիստոնեաներուն վերստին եկեղեցի վերադարձին:



Քրիստոնեաներ, աշխարհի մէջ ապրելով, ենթակայ են աշխարհին փորձութիւններուն. աշխարհը ունի յաջողութեան, ուրախութեան եւ զօրութեան իր յատուկ չափանիշները, որոնք ընդհանրապէս չեն յարմարիր այս արժէքներուն քրիստոնէական հասկացողութեան:

Քրիստոնեաներ կ'ապրին աշխարհի մէջ եւ կ'ակնկալուի իրենցմէ գործունեայ ըլլալ իրենց միջավայրին եւ ընկերութեան մէջ. սակայն միեւնոյն ժամանակ անոնք գիտակից են իրենց Աստուծոյ Թագաւորութեան պատկանելիութեան: Ինչպէ՞ս կարելի է ապրիլ աշխարհի մէջ, սակայն չպատկանիլ անոր:



9. Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Դպրոցները

Քրիստոնէական Եկեղեցւոյ պատմութեան սկիզբէն ջանքեր տարուած են բացատրելու Քրիստոնէական Հասարակ. Եկեղեցին յաճախ շեշտած է Տէր Յիսուսի աստուածութիւնը, անոր մարդեղութեան կողքին: Յիսուս Քրիստոս եղած է ե՛ւ ճշմարիտ ու կատարեալ մարդ, ե՛ւ ճշմարիտ ու կատարեալ Աստուած:

Ինչպէ՞ս կարողացաւ Եկեղեցին արտայայտել այս ճշմարտութիւնը եւ ինչպիսի՞ դժուարութիւններ դիմագրաւեց առաջին դարերու եկեղեցին:

Հռոմէական Կայսրութեան կարելոր քաղաքները, դպրոցներն ու մտաւորականները

Ա. Աղեքսանդրիա

Հռոմէական Կայսրութեան մէջ Հռոմէն ետք երկրորդ կարելոր քաղաքը Աղեքսանդրիան էր, որ կը գտնուէր Եգիպտոսի մէջ: Քաղաքը հիմնուած էր Մեծն Աղեքսանդրի կողմէ 332 թ.ին Ք. ա. եւ եղած էր մտաւորական ու մշակութային կեդրոն: Աղեքսանդրիա քաղաքը ունեցած է մեծ գրադարան մը, որ կը պարունակէր գրականութեան, գիտութեան եւ փիլիսոփայութեան կարելոր գրաւոր



Պատկերը կը ներկայացնէ Աղեքսանդրիոյ շրջադարանը, որ կը պարունակէր 400-000 էջանի պարտաթուղթ մագաղաթներ:

Առնուած համացանցէն

աղբիւրներ: 2րդ դարու վերջաւորութեան, քաղաքը կը ճանչցուի իր Աստուածաբանական Ծեմարանով, որ Քրիստոնէական Հաւատքի կեդրոն եղած էր ի շնորհիւ երկու Եկեղեցական Հայրերու՝ Կղեմէս եւ Ռրոգիմէս:

- Կղեմէս (150-215)

Կղեմէս [Clement of Alexandria] եղած է քրիստոնէայ աստուածաբան եւ Եկեղեցոյ Հայր: Ան ծնած է Յունաստանի Աթէնք քաղաքին մէջ, սակայն ուսում ստացած է Աղեքսանդրիոյ մէջ. հեթանոսութենէ Քրիստոնէութեան դառնալով, ան ստանձնած է Աղեքսանդրիոյ Աստուածաբանական Ծեմարանին պատասխանատուութիւնը եւ դարձած է Քրիստոնէութեան առաջին ուսուցիչներէն մին:

- Ռրոգիմէս (185-254)

Ռրոգիմէս [Origen] եղած է քրիստոնէայ գրող, ուսուցչապետ եւ աստուածաբան: Ծնած է Աղեքսանդրիոյ մէջ: Ան քրիստոնէայ ընտանիքի զաւակը եղած է եւ միշտ ծարաւ ունեցած է գիտութեան: Եղած է Կղեմէսի աշակերտ, դարձեալ Քրիստոնէութիւն ուսուցանած է մօտ 28 տարիներ: Ան ջանացած է միացնել յունական փիլիսոփայութիւնը Քրիստոնէական կրօնքին հետ: Ռրոգիմէս, կայսրին մղած հալածանքներուն պատճառով կը ձերբակալուի եւ կը բանտարկուի. 251ին բանտէն վիրաւոր դուրս գալով երեք տարիներ ետք կը մահանայ:

Ռրոգիմէս կը նկատուի Արեւելեան Եկեղեցոյ ամենակարեւոր Հայրերէն մին:

Բ. Անտիոք

Սուրիոյ մէջ, երրորդ կարեւոր քաղաքն էր Հռոմէական Կայսրութեան: Անտիոքի մէջ էր, որ Յիսուսի աշակերտները առաջին անգամ կը կոչուին քրիստոնէաներ (Գրծ.

11.26): (ներկայիս թրքական գիւղաքաղաք մըն է Իսթէն-տէրունի նահանգին մէջ):

Երկու Աստուածաբանական Դպրոցներ

Վերոյիշեալ երկու քաղաքներուն մէջ կը զարգանան երկու տարբեր աստուածաբանական մօտեցումներ ու դպրոցներ: Այս երկու մօտեցումները սակայն ազդուած էին երկու տարբեր յոյն փիլիսոփաներու՝ Պլատոնի եւ Արիստոտէլի գաղափարներէն:

Պլատոն (428-347 Ք.ա.)

Պլատոն [Plato] եղած է ամենամեծ եւ ամենահռչակաւոր յոյն փիլիսոփաներէն մին: Ծնած է Աթէնքի մէջ եւ եղած է Սոկրատի աշակերտ: Պլատոնի փիլիսոփայութեան հիմը հասկնալու համար պէտք է անդրադառնալ գաղափարներու կամ ձեւերու մասին իր հասկացողութեան [Theory of forms/ ideas].

Ըստ Պլատոնի, ճշմարիտ գիտութեան նիւթը գաղափարներն են եւ ոչ անոնց ֆիզիքական օրինակները: Օրինակ՝ արդարութիւնը որպէս գաղափար ճշմարտութիւն մըն է, որ պէտք է սերտուի, իսկ անոր ֆիզիքական գործադրութիւնը կրնայ տարբերիլ ըստ պարագայի կամ ժամանակի: Ուրեմն գաղափարները, ինչպէս՝ սէր, գեղեցկութիւն, բարութիւն... իրականութիւններ են, սակայն ոչ ֆիզիքական աշխարհի համար, կարելի է գանոնք սերտել եւ հասկնալ միայն տրամաբանութեամբ, իսկ անոնց աշխարհին մէջ իրականացումը կը մնայ անկատար:

Պլատոն կ'արհամարհէ փորձառական գիտութեան կարելորութիւնը: Գաղափարները աւելի անհրաժեշտ են, որպէս սերտողութեան նիւթ քան ֆիզիքական կամ պատմական իրողութիւնները, որովհետեւ անոնք անփոփոխ, կատարեալ եւ յաւիտենական են:

Արիստոտել (384-322 Ք.ա.)

Արիստոտել [Aristotle] եղած է նաև ամենակարևոր յոյն փիլիսոփաներէն եւ գիտնականներէն մին: Ան դարձած է Պղատոնի աշակերտ, սակայն Պղատոնի հակառակ, ան շեշտած է ֆիզիքական աշխարհի կարելորութիւնը՝ չկայ նիւթ առանց ձեւի [form] եւ չկայ ձեւ առանց նիւթի:

Արիստոտել փիլիսոփայութեան կողքին հետաքրքրուած էր կենսաբանութեամբ եւ բնագիտութեամբ: Իրեն համար անհատներ, շօշափելի առարկաներ, բոյսեր, կենդանիներ եւն. յատուկ տեղ գրաւած են որպէս գիտութեան նիւթ: Հետեւաբար, ան շեշտած է փորձառական գիտութեան կարելորութիւնը փիլիսոփայութեան կողքին: Արիստոտելի այս հետաքրքրութիւնը կու գայ իր հորմէն, որ Մեծն Աղեքսանդրի հօր բժիշկն էր:

Այս երկու փիլիսոփաներէն ներշնչուած աստուծաբանական զոյգ դպրոցներն են՝

<p style="text-align: center;">Աղեքսանդրիոյ Դպրոցը [Alexandrian School]</p>	<p style="text-align: center;">Անտիոքի Դպրոցը [Antiochene School]</p>
<p>■ Այս Դպրոցը կը հետեւէր յոյն հոշակաւոր իմաստասէր Պղատոնի (429-347 Ք.ա.) գաղափարներուն, որուն համար կարեւոր էր աննիւթական, բարոյական եւ իտէալական աշխարհը:</p> <p>■ Ըստ այս Դպրոցին, հոգին եւ հոգեւոր աշխարհը նախապատիւ է մարմնէն եւ ֆիզիքական աշխարհէն:</p> <p>■ Յատուկ շեշտ կը դրուի Յիսուսի աստուածային բնութեան վրայ:</p>	<p>■ Այս Դպրոցը կը հետեւէր Արիստոտէլի գաղափարներուն, որուն համար մարդ արարած հոգեկանի եւ ֆիզիքականի միացումն էր եւ երկուքը նոյն չափով կարեւոր կը նկատուէին:</p> <p>■ Այս դպրոցը կը շեշտէր պատմական իրականութիւնը եւ հետեւաբար Աստուածաշունչին պատմական սերտողութիւնը:</p> <p>■ Յատուկ շեշտ կը դրուի Յիսուսի մարդկային բնութեան վրայ: Յիսուս մարդ էր սակայն կատարելապէս բարի. իր մէջ Աստուծոյ խօսքը եւ իմաստութիւնը կը բնակին, եւ կը միանան յատուկ ձեւով իր մարդկային բնութեան հետ:</p>



Առաջին դարերուն, ինչպէս նաեւ յաջորդներուն, Եկեղեցին միշտ ջանացած է Աստուծոյ մասին սորվեցնել, օգտագործելով այդ օրուայ գրական ոճն ու փիլիսոփայութիւնը: Սակայն անդրադառնալու ենք թէ մարդկային գրականութիւնն ու լեզուն, նաեւ միտքն ու փիլիսոփայութիւնը սահմանափակ են. Աստուած կը մնայ մարդուն համար բարձր կամ անասելի Խորհուրդ մը:

Գ. Եկեղեցական Առաջին Ժողովներ

10. Մեծն Կոստանդիանոս

Հալածանքը կը շարունակուի քրիստոնեաներու դէմ մինչեւ 4րդ դարու սկիզբը, երբ Մեծն Կոստանդիանոս կը տիրանայ Կայսրութեան գահին: Այս մէկը հիմնովին կը փոխէ Եկեղեցիին պատմութիւնը: Կայսրը 313 թ.ին հրովարտակ մը կը ստորագրէ, որուն մէջ Քրիստոնէութիւնը կը ճանչցուի իբր Կայսրութեան կրօնքը: Հետեւաբար քրիստոնեաներու հանդէպ հալածանքը կը դադրի:

Կոստանդիանոս ոչ միայն կրօնական ազատութիւն կու տայ, այլ նաեւ նեցուկ կը կանգնի Եկեղեցիին կեանքին եւ ծառայութեան: Անոր գործերէն կարելի է նաեւ յիշել թէ ան շաբթուան առաջին օրը արձակուրդի օր կը համարէ (Կիրակի), ինչպէս նաեւ կը հիմնէ Կոստանդնուպոլիս քաղաքը, որպէս մայրաքաղաք (ներկայիս Իսթանպուլ՝ Թուրքիա):



Կայսրը կը մկրտուի

Մեծն Կոստանդիանոս կանուխէն կը յարի Քրիստոնէական Հաւատքին: Անոր ծնողքը, մանաւանդ մայրը՝ Հելենա, մեծ դեր ունէր իր մէջ ցանելու Քրիստոնէական հաւատքն ու հոգին: Կոստանդիանոս, իր ամբողջ կեանքին ընթացքին կ'օգնէ եկեղեցիներուն եւ քրիստոնեաներուն, իր հրամանով կը շինուին քանի մը եկեղեցիներ: Կայսրին մասին տարբեր աւանդութիւններ կան: Կարգ մը

աւանդութիւններ զինք կը նկատեն Եկեղեցոյ սուրբերէն մէկը, ուրիշ աւանդութիւններ կ'ըսեն թէ ան կանուխէն դարձի եկած է: Սակայն իրականութեան մէջ Կոստանդիանոսի մկրտութիւնը տեղի ունեցած է 337 թ.ին, երբ ան մահուան անկողինն էր:

Արիոսական վէճը

318ին վէճ մը կը սկսի Աղեքսանդրիոյ մէջ, եկեղեցական երէցի մը՝ Արիոսի ուսուցմունքներուն հետեւանքով: Արիոս կը սորվեցնէ թէ Յիսուս Աստուծոյ նոյն էութենէն չէր: Յիսուս ստորադաս էր Աստուծմէ, ուրիշ մարդ արարածներու նման, սակայն ան ամենապատաւորեալ ստեղծուածն էր: Այսպիսով Արիոս ուրացաւ Յիսուսի աստուածութիւնը եւ զայս նկատեց որպէս ստեղծուածներուն մէջ ամենաբարձրը:

Արիոսի այս գաղափարները կը մերժուին Աղեքսանդրիոյ Եկեղեցիին պատասխանատուներէն, ինչպէս նաեւ ուրիշ եկեղեցական առաջնորդներէ եւ այս մէկը բաւական մեծ վէճ կը պատճառէ եկեղեցիներուն միջեւ:

Նիկիոյ Ժողովը

Կոստանդիանոս, Կայսրութեան խաղաղութիւնը եւ միութիւնը չկորսնցնելու նպատակով, ժողով մը կը գումարէ Փոքր Ասիոյ Նիկիա քաղաքին մէջ, Մայիս 325ին, որուն կը հրահրուին Կայսրութեան բոլոր եպիսկոպոսները: Այս մէկը կ'ըլլայ Համաշխարհային Առաջին Եկեղեցական Ժողովը:

Ժողովին ներկայ կ'ըլլան մօտ 300 մասնակիցներ արեւելքէն, եւ միայն 6՝ արեւմուտքէն: Կայսրը անձամբ ներկայ էր, եւ ինք կ'առաջնորդէր Ժողովին ընթացքը: Այս Ժողովը քրիստոնեաներուն առաջին յաղթանակն էր երեք դարերու հալածանքէ ետք: Սակայն միեւնոյն ժամանակ այս թուականը կարելի է նկատել որպէս սկիզբ

Եկեղեցիին կեանքին մէջ նոր ուղղութեան մը, որուն համաձայն եկեղեցին կը նկատուի Կայսրութեան ենթակայ: Այսպիսով կրօնքն ու եկեղեցին կը միատեղուին քաղաքական իշխանութեան հետ: Այս մէկը կարելի է եզրակացնել Նիկիոյ Ժողովին պատմական ընթացքէն, յատկապէս նկատելով թէ Կայսրն էր որ Ժողովի կանչեց կղերականները եւ ինք անձամբ առաջնորդեց անոր որոշումները:

Ներկաներուն մեծ մասին նպատակն էր մերժել Արիոսին գաղափարները, որ ուրացաւ Յիսուսի աստուածութիւնը: Անոնք առնելով հաւատոյ հանգանակ մը, որ մկրտութեան ընթացքին կ'արտասանուէր Երուսաղէմի մէջ, աւելցուցին անոր որոշ արտայատութիւններ, որոնք յստակօրէն կը հակառակէին Արիոսին ուսուցմունքներուն՝ «ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր», «Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ», «նոյն ինքն ի բնութենէ Հօր»:

Ժողովին արդիւնքն էր մերժել եւ բանադրել Արիոսի գաղափարները. սակայն Արիոսի գաղափարները կը շարունակեն իրենց ազդեցութիւնը Եկեղեցիին պատմութեան մէջ:

Եօթը Ընդհանրական Ժողովներ

Եօթը Ընդհանրական Եկեղեցական Ժողովներ տեղի ունեցած են Եկեղեցոյ պատմութեան մէջ: Այս Ժողովները ընդունուած են մեծ թիւով քրիստոնեաներու կողմէն: Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցին կը շարունակէ ունենալ եւս 14 ժողովներ, որոնք նաեւ ընդհանրական կը սեպուին, բայց այլ եկեղեցիներ զանոնք չեն ընդունիր:



Շատ յանախ, պատմութեան ընթացքին, Եկեղեցին ու կրօնքը օգտագործուած են քաղաքական նպատակներ հետապնդելու: Կոստանդիանոս իր Կայսրութեան խաղաղութիւնը ապահովելու նպատակով Համաշխարհային Առաջին Եկեղեցական Ժողովը գումարեց Նիկիոյ մէջ:

Անկախ այդ հարցումէն, թէ արդիւնքը դրական կամ ժխտական եղած է, պէտք է անդրադառնալ թէ քաղաքականութեան ճամբան տարբեր է Քրիստոնէութեան իրականութենէն եւ անոր հետապնդած նպատակներէն: Այս երկուքին՝ քաղաքականութեան եւ հաւատքին միացումով, Քրիստոնէութեան խորքը եւ նշանակութիւնը կը կորսուի եւ կը դառնայ միջոց, մարդկային զօրութիւն եւ փառք ապահովելու, քան՝ աստուածային փառքն ու ճշմարտութիւնը բերելու աշխատիքին:

11. Յիրաւի Աստուած, Յիրաւի Մարդ

Եօթը Ընդհանրական Ժողովները կարելի է հոս յիշել, որոնցմէ միայն առաջին չորս ժողովներուն աստուածաբանական համոզումները ամփոփ ձեւով կը ներկայացուին այս գիրքին մէջ.-

1. Նիկիոյ Առաջին Ժողովը (325)
2. Կոստանդնուպոլսոյ Առաջին Ժողովը (381)
3. Եփեսոսի Առաջին Ժողովը (431)
4. Քաղկեդոնի Ժողովը (451)
5. Կոստանդնուպոլսոյ Երկրորդ Ժողովը (553)
6. Կոստանդնուպոլսոյ Երրորդ Ժողովը (680-681)
7. Նիկիոյ Երկրորդ Ժողովը (787)

Նիկիոյ Ժողովին յաջորդող երեք ժողովներուն պիտի անդրադառնանք Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի դպրոցներուն տարբեր աստուածաբանութիւններուն ընդմէջէն: Այս երեք ժողովներուն ընդհանուր նիւթն էր Յիսուս Քրիստոսի անձը, անոր կատարեալ մարդեղութիւնը եւ կատարեալ աստուածութիւնը:

**Եկեղեցական Երկրորդ Ժողով
(Կոստանդնուպոլսոյ Առաջին Ժողովը, 381թ.)**

<p align="center">Աղեքսանդրիոյ Աստուածաբանութիւնը</p>	<p align="center">Անտիոքի Աստուածաբանութիւնը</p>
<p><i>Յիսուս աստուածային բնութեան եւ մարդկային մարմնի միացումն է:</i></p> <p><i>Յիսուս կատարելապէս Աստուած է, որովհետեւ աստուածային բնութիւնը միանալով մարդկային մարմնին հետ, մարդկային հոգիին եւ մտքին տեղը կը գրաւէ:</i></p> <p><i>Յիսուս սովորական մարդու նման չէր, այլ ան «մարդոց նման ըլլալով եւ մարդու կերպարանքովը» յայտնուեցաւ (Փլա.2.7):</i></p>	<p><i>Յիսուս աստուածային բնութեան եւ մարդուն (մարմին եւ հոգի) միացումն է:</i></p> <p><i>Յիսուս կատարելապէս մարդ էր, ան ունէր մարդկային միտք, հոգի եւ մարմին:</i></p> <p><i>Յիսուս ունէր երկու տարբեր բնութիւններ՝ ան կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած էր:</i></p>
<p>Յիսուս = Աստուածային բնութիւն + մարդու մարմին</p>	<p>Յիսուս = Աստուածային բնութիւն + մարդ (մարդկային բնութիւն)</p>

**Եկեղեցական Երրորդ Ժողով
(Եփեսոսի Առաջին Ժողովը, 431թ.)**

<p align="center">Աղեքսանդրիոյ Աստուածաբանութիւնը</p>	<p align="center">Անտիոքի Աստուածաբանութիւնը</p>
<p>Կիրելի Աղեքսանդրացի [Cyril of Alexandria] Նեստորի (Անտիոքի աստուածաբաններէն) գաղափարներուն հակառակելով կը սորվեցնէ թէ երկու բնութիւնները կը միանան Յիսուսի մէջ, այնպէս որ անհնար է անոնց անջատ մնալը: Այս ժողովին Նեստոր կը դատապարտուի:</p>	<p>Այս դպրոցէն ծագում կ'առնէ շարժում մը, որուն հիմնադիրն էր Նեստոր: Ան կը սորվեցնէ թէ Յիսուսի մէջ միանալով երկու բնութիւնները, երկուքը կը մնան անփոփոխ եւ իրարմէ անջատ:</p>

**Եկեղեցական Զորրորդ Ժողովը
(Քաղկեդոնի Ժողովը, 451 թ.)**

Այս Ժողովին ջանքեր կ'ըլլան վերջնական հաւատոյ հանգանակ մը ունենալու, որ ձեռով մը Նիկիոյ Հանգանակէն կը փոխի: Այս Հանգանակը ժողովի դրուած նիւթերը կ'ամփոփէ եւ երկու կողմերը (Աղեքսանդրիա եւ Անտիոք) կը գոհացնէ:

Քաղկեդոնի Հաւատոյ Հանգանակէն մաս մը կարելի է հոս մէջբերել՝

«Բոլորս ալ կը ... դաւանինք թէ մեր Տէրը Յիսուս Քրիստոս մէկ է եւ միեւնոյն Որդին, միեւնոյնը Աստուածութեան մէջ կատարեալ, եւ մարդկութեան մէջ կատարեալ. Աստուած ճշմարիտ եւ մարդ ճշմարիտ ... Էակից Հօր հետ Աստուածութեան մէջ, եւ միեւնոյնը մեզի հետ Էակից մարդկութեան մէջ. Մեր նման ամէն բանի մէջ բացի մեղքէ: Ծնեալն Հօրմէ ... եւ ծնաւ Մարիամ կոյսէն, որ Աստուածածինն է. ... Ան յայտնուեցաւ երկու բնութիւններով, որոնք կը մնան առանց շփոթի, առանց յեղումի, բաժանումի եւ անջատումի. ... Իւրաքանչիւր բնութեան յատկութիւնները կը պահուին եւ կը միանան մէկ անձի եւ մէկ անձնատրութեան մէջ ...»^{*}

Այս Ժողովին վաւերացուած Հաւատոյ Հանգանակը ընդունուած է բոլոր եկեղեցիներուն կողմէ, բացի ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներէն, որոնք չկրցան Ժողովին մասնակցիլ տարբեր պատճառներով, Հայ Առաքելական Եկեղեցին անոնց մէջ ըլլալով: Հայեր Վարդանանց պատերազմին պատճառով չկարողացան մասնակցիլ այս Ժողովին, սակայն հետագային՝ Դուինի Բ. Ժողովին (554 թ.ին) Եկեղեցին պաշտօնապէս մերժեց Քաղկեդոնի

^{*} Թարգմանուած՝ J.N.D. Kelly, *Early Christian Doctrines*, էջ՝ 339.

Ժողովին հաստատած երկու բնութիւններու վարդապետութիւնը:

Այսպիսով այս Հանգանակը դարձաւ Կայսրութեան պաշտօնական վարդապետական կանոնը, այսինքն եկեղեցիին կողմէ որդեգրուած հաւատքի բացատրութիւնն ու ուսուցումը:

Սակայն Արեւելեան եկեղեցիներէն անոնք, որոնք Ադեքսանեդրիոյ աստուածաբանութիւնը կը պաշտպանէին եւ համոզուած էին Յիսուսի միայն աստուածային բնութիւն ունենալով, (այսինքն՝ Յիսուսի մէջ կը միանան երկու բնութիւնները ըլլալու մէկ բնութիւն), չեն գոհանար Քաղկեդոնի այս Հանգանակով: Այս մէկը բաժանումի պատճառ կը դառնայ Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիներու միջեւ, որուն կ'աւելնան ուրիշ պատճառներ եւ վերջնական բաժանումը տեղի կ'ունենայ 11րդ դարուն, 1054 թ.ին: (Տե՛ս Քրիստոնեայ Եկեղեցւոյ Պատմութեան Ընթացքի ցուցակը, գիրքին սկիզբը):



Այսօր, Քրիստոնեայ Եկեղեցին (անկախ տարբեր բաժանումներէ) կը հաւատայ Յիսուս Քրիստոսի կատարեալ մարդեղութեան եւ աստուածութեան: Այս իմաստով կարելի է եկեղեցական բաժանումները (մեծ մասամբ) վերագրել քաղաքական, լեզուական եւ մշակութային անհամաձայնութիւններու: Քրիստոնեաներ կը հաւատան թէ Յիսուս կատարեալ մարդ էր. ան մեզի նման ապրեցաւ, չարչարուեցաւ եւ մեռաւ, սակայն մեռելներէն յարեաւ: Ինք է ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը բոլոր անոնց համար, որոնք ճշմարտապէս իր անունը կը կրեն:



Դ. Եկեղեցիին Հիմնական Բաժանումները

12. Ուղղափառ Եկեղեցին

Ուղղափառ Եկեղեցին. ծագում եւ նպատակ

Ուղղափառ բառը [Orthodox] կը նշանակէ ուղիղ վարդապետութեան հետեւող, այսինքն՝ առաքեալներուն փոխանցած ճշմարտութեան համապատասխան:

Ճորդ դարէն ի վեր հինգ պաշտօնական պատրիարքական աթոռներ գոյութիւն ունեցած են՝ Հռոմի, Աղեքսանդրիոյ, Անտիոքի, Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի մէջ (Տեն՝ Հռոմէական Կայսրութեան քարտէսը գիրքին սկիզբը): Դարերու ընթացքին Արեւմտեան (Հռոմի) եւ Արեւելեան եկեղեցիներու միջեւ անհամաձայնութիւնները կը շարունակուին: Հռոմէական Պապականութիւնը ինքզինք կը հռչակէ բարձրագոյն հեղինակութիւն. Արեւելեան Բիւզանդական Եկեղեցին մերժելով այդ գերիշխանութիւնը կը բաժնուի Հռոմէական Եկեղեցիէն վերջնականապէս 1054ին եւ կը կոչուի Ուղղափառ Եկեղեցի, այսինքն Յիսուս Քրիստոսի վարդապետութեան հետեւող: Այսպիսով Ուղղափառ Եկեղեցին, որ առաջին հազարամեակին միացած էր Կաթողիկէ Եկեղեցիին հետ եւ կը կոչուէր Ուղղափառ Կաթողիկէ Եկեղեցի, կ'ունենայ իր եկեղեցական անջատ իրականութիւնը:

Ուղղափառ Եկեղեցին կը կազմուի անկախ եկեղեցիներէ, որոնք հիմնականօրէն տարածուած են Եւրոպայի արեւելքը նաեւ Միջին Արեւելքի մէջ: Ներկայիս, Ուղղափառ եկեղեցիներ կան նաեւ Եւրոպայի արեւմուտքը, ինչպէս նաեւ Ասիոյ, Ափրիկէի եւ Ամերիկայի մէջ:

Եկեղեցական կազմակերպություն և աստիճանաւորումներ
Ուղղափառ եկեղեցիները կը տնօրինուին իրենց յատուկ եկեղեցական խորհուրդներով և եպիսկոպոսներով, որոնց գլխաւորը պատրիարքն է: Պատրիարքին հեղինակութիւնը միայն իր պատասխանատուութեան տակ գտնուող շրջանին կամ հողամասին վրայ է. պատրիարքներ չեն նկատուիր որպէս անսխալական հոգեւոր առաջնորդներ, Պապին նման:

Ներկայիս, Ուղղափառ Եկեղեցին ունի 9 պատրիարքութիւններ (4 հնօրեայ պատրիարքութիւնները՝ Աղեքսանդրիոյ, Անտիօքի, Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի մէջ, և 5 աւելի ուշ հիմնուած պատրիարքութիւններ՝ Ռուսիոյ, Վրաստանի, Պուլկարիոյ, Սերպիոյ և Ռումանիոյ մէջ): Ասոնց կողքին կան 6 անկախ Արքեպիսկոպոսական աթոռներ՝ Կիպրոսի, Յունաստանի, Ալպանիոյ, Լեհաստանի, Չեխիոյ և Ամերիկայի մէջ: Ասոնցմէ Կոստանդնուպոլսոյ (Իսթանպուլի) Պատրիարքութիւնը առաջնակարգ տեղ կը գրաւէ: Կոստանդնուպոլիս տղած է մայրաքաղաքը Բիզանդական Կայսրութեան 330էն մինչեւ 1453, ապա թրքական իշխանութեան տակ անցնելով կը դառնայ Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքը մինչեւ 1923:

Աղեքսանդրիոյ, Անտիօքի և Երուսաղէմի պատրիարքութիւնները նոյնպէս իսլամական իշխանութիւններու տակ մնալով, կը կորսնցնեն իրենց անցեալի հեղինակութիւնը: Ուղղափառ Եկեղեցին երկար կը տառապի այս վերջին 5 դարերու ընթացքին, նախ Օսմանական կայսրութենէն և վերջը համայնավարութենէն, որուն անկումով, 1988ին Եկեղեցին վերագարթնումի շրջան մը կ'ունենայ Ռուսիոյ և Արեւելեան Երրոպայի մէջ:

Ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներ

Ոչ-Քաղկեդոնական [Non-Chalcedonian] Եկեղեցիները, մերժելով Քաղկեդոնի Ժողովին Հաւատոյ Հանգանակը, կը բաժնուին միւս եկեղեցիներէն նաեւ Քաղկեդոնական-Ուղղափառ Եկեղեցիէն, կազմելով անկախ եկեղեցիներ: Ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներն են՝ Ղպտի, Ասորի, Հայ, Եթովպիացի, եւ վերջերս Էրիթրիոյ եկեղեցիները:

Ուղղափառ Եկեղեցիէն դէմք մը՝

Յովհան Ոսկեբերան (349-407)

Յովհան Ոսկեբերան [Saint John Chrysostom] եղած է Արեւելեան Եկեղեցոյ Հայրերէն մին: Սուրբ Յովհան, ապրած է 4րդ դարու վերջին կիսուն: Ան ծնած եւ մեծցած է Անտիոքի մէջ: Ստացած է յունական դաստիարակութիւն եւ եղած է փայլուն աշակերտ, ապա՝ սորված է քարոզաբանութիւն եւ յաջողած է գրաւել մարդոց ուշադրութիւնն ու կեդրոնացումը:

Տարիներու ընթացքին ան եղած է Անտիոքի մէջ ամենահռչակատր քարոզիչը, ուստի կոչուած է Ոսկեբերան [Chrysostom]: Իր մասին կը պատմուի թէ ինք կը քաջալերէր իրեն մտիկ ընողները քարոզին մասին մտածելու եւ հարցումներ ուղղելու: Ս. Յովհան մարդուն միտքը նկատած է մարդուն ամենամեծ ուժը: Ծիշդ հաւատք ունենալու համար պէտք է հասկնալ եւ մտածել հաւատքի մասին: Որպէս քարոզիչ, Յովհան Ոսկեբերան շեշտած է հետեւեալ կէտերը.-

Ա. Ապրիլ մեր հաւատքին համաձայն

Եկեղեցիի Հայրերէն ոչ մէկը այնքան շեշտած է հաւատքի եւ կեանքի միջեւ կապը որքան Յովհան Ոսկեբերան: Ան ըսած է՝

«Եթէ իսկապէս կը սիրենք Յիսուսը, ուրեմն ամէն ինչ ընելու ենք որպէս այդ սիրոյն արդիւնքը»:

Ան նաեւ շեշտած է աղօթքին կարեւորութիւնը. հաւատացեալը միշտ եւ ամէն տեղ կրնայ իր Աստուծոյն աղօթք բարձրացնել: Աղօթելու համար ոչ մէկ պայման կայ, ո՛չ յատուկ ժամ կամ տեղ, ո՛չ ալ յատուկ բառեր... կրնանք շատ պարզ աղօթք բարձրացնել Աստուծոյ, կարելորդ՝ մեր հոգիներուն մէջ ծարաւ ունենանք իրեն հանդէպ:

Բ. Կեանքով վկայել

Յովհան Ոսկեբերան կը նկատէ թէ երբ շրջանակի մը մէջ հաւատացեալներ եւ կուսպաշտներ միասին կ'ապրին, հաւատացեալին համար վկայութեան միակ ձեւը կեանքով վկայելն է, այսինքն իր գործերով:

Ուղղափառ աստուածաբանութիւնը

Ուղղափառ Եկեղեցին, հակառակ իր կրած դարաւոր հալածանքներուն, իր Հայրերուն ուսուցումներն ու աստուածաբանութիւնը պահած է, շեշտելով աստուածային անհասանելի խորհուրդը, այսինքն մարդկային տրամաբանութենէն անդին աստուածային իրականութիւնը: Քանի մը Ռուս արդի աստուածաբաններ կը ներկայացնեն աստուածաբանական այս մօտեցումը, ինչպէս՝ Ֆլատիմիր Լօսքի (1903–1958) եւ Ծորճ Ֆլորովսքի (1893–1979):



Ուղղափառ աստուածաբանությունը ունի խորհրդաւոր (միսթիք) եւ հոգեւոր ուղղություն: Այս մէկը կը յայտնուի մարդ արարածին ձգտումով՝ միանալու Աստուծոյ հետ խոկումի եւ աղօթքի յատուկ ընթացքով:

Ինչպէ՞ս կրնայ մարդ արարած, մեր ներկայ դարուն, աւելիով մօտենալ եւ միանալ իր Հօր:



13. Հայ Առաքելական Եկեղեցին Ա. Պատմական Ակնարկ


Հայեր եւ Հայ Առաքելական Եկեղեցին

Նախքան Քրիստոնէութեան ընդունիլը Հայաստանի մէջ, Հայեր հեթանոս էին եւ կը պաշտէին զանազան չաստուածներ:

Յիսուսի առաքելներէն Թադէոսի եւ Բարթողիմէոսի քարոզութեան արդիւնքով Քրիստոնէութիւնը մուտք կը գործէ Հայաստան: Այդպիսով է, որ Հայկական Եկեղեցին կը կոչուի Առաքելական:

301 թ.ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի ջանքերով, Տրդատ Գ. Քրիստոնէութիւնը կը հռչակէ երկրին կրօնքը եւ ուրեմն Հայաստանը կը դառնայ առաջին երկիրը, որ պաշտօնապէս կ'ընդունի Քրիստոնէութիւնը: Յետագային, Ս. Գրիգոր կը նշանակուի առաջին կաթողիկոսը հայերուն, էջմիածինը ունենալով որպէս կեդրոն: Այդպիսով սկիզբ կ'առնէ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը:

404 թ.ին Մեսրոպ Մաշտոցի ջանքերով կը կատարուի հայերէն այբուբենին գիտքը, որուն միջոցով կարելիութիւնը կը ստեղծուի Աստուածաշունչը ամբողջութեամբ թարգմանելու դասական հայերէնի 420 թ.ին:



Այս կերպով հայեր ունեցան իրենց գրական լեզուն, որ դարերու ընթացքին մեծապէս նպաստեց ազգապահպանման ճիգերուն:

5րդ դարու կիսուն, 26 Մայիս 451ին, Վարդանանց Ճակատամարտը տեղի ունեցաւ հայերու եւ պարսիկներու միջեւ: Հակառակ պատերազմին մէջ իրենց յաղթանակին, պատարսիկները չեն յաջողիր պարտադրել իրենց կրօնքը հայերուն: Վարդանանց Ճակատամարտը յանուն խղճի ազատութեան մղուած առաջին պատդրազմներէն մին է: Մինչ այդ, 451 թ.ին հայեր, պատերազմի պատճառով, չեն կրնար ներկայ գտնուիլ Համաշխարհային Եկեղեցական 2որրորդ Ժողովին, որ տեղի ունեցաւ Քաղկեդոնի մէջ: Տարիներ ետք, Դուինի ժողովին, Հայ Եկեղեցին վերջնականապէս կը մերժէ Քաղկեդոնի որոշումները: Այսպիսով հայեր կը գոհանան առաջին երեք Համաշխարհային Ժողովներով եւ այս պատճառ կը դառնայ մեծ բաժանումի իրենց եւ միւս եկեղեցիներու միջեւ, որոնք ընդունած էին Քաղկեդոնի ժողովին որոշումները:

11րդ դարուն սելճուք թուրքեր հիւսիսէն յառաջանալով կը գրաւեն հայկական շրջանները: Այս գրաւումները եւ անոնց պատճառած հալածանքները կը ստեղծեն արտագաղթի հսկայ ալիք մը: Մեծաթիւ հայեր կը գաղթեն Կիլիկիա, որ կը գտնուի Միջերկրականի հիւսիս-արեւելեան ափերուն վրայ:

1198ին այնտեղ կը հիմնուի հայկական թագաւորութիւն, այսպիսով Կիլիկիա կը նկատուի երկրորդ հայրենիք մը: Այս ժամանակաշրջանէն կարելի է յիշել Ներսէս Ընորհալին (1102-1173), որ ջանացած է հաշտ յարաբերութիւններ մշակել միւս եկեղեցիներու հետ: 1293ին Կիլիկիոյ Թագաւորութեան Սիս մայրաքաղաքին մէջ կը հաստատուի Կաթողիկոսութիւնը:

1441ին ժողով մը կը գումարուի Էջմիածնի մէջ, որուն իբր արդիւնք կ'որոշուի կաթողիկոսական գահը

վերադարձնել Էջմիածին: Սիս կը շարունակէ ունենալ իրեն յատուկ Կաթողիկոսութիւնը, որ կը կոչուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն:

15րդ դարուն որոշ թիւով հայեր իրենց կղերական առաջնորդներով կ'ընդունին միանալ Կաթողիկէ Եկեղեցիին: Աստիճանաբար կը ստեղծուի Հայ Կաթողիկէ Համայնքը:

Առաջին Համաշխարհային պատերազմին (1914-1918) հայեր թրքական իշխանութիւններու կողմէ ենթարկուեցան Յեղասպանութեան, տեղահանութեան եւ անմարդկային վարմունքի, որոնց ընթացքին 1.5 միլիոն հայեր սպաննուեցան եւ ամբողջովին պարպուեցաւ Կիլիկիան, Արեւմտեան Հայաստանը եւ Արեւելեան Հայաստանէն մաս մը: Յեղասպանութեան վերապրողներ, Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկաներուն մէջ հիմը կը դնեն Հայկական Սփիւրքին:

28 Մայիս, 1918ին Արեւելեան Հայաստանի փրկուած մասը կը հռչակուի անկախ հանրապետութիւն մը: Սակայն, անկախ 1920ին կ'իջնայ խորհրդային իշխանութեան* տակ, մինչեւ 1991, երբ կը վերստանայ իր անկախութիւնը:

** Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան իշխանութեան յատկապէս առաջին յիսնամեակին, համայնավար գաղափարախօսութեան «աթէիստ» (անաստուած) համոզումներուն պատճառով, Հայաստանի մէջ խիստ կը սահմանափակուի Եկեղեցւոյ գործունէութիւնը. կը քանդուին եկեղեցիներ, կը սպաննուին հոգեւորականներ եւ մեծ մասանջ կ'արձանագրէ հաւատացեալներուն թիւը:

Սակայն անկախութենէն ետք, կը վերականգնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հեղինակութիւնը եւ քրիստոնէական հաւատքի քարոզութիւնը նոր թափ կ'առնէ: Կը կազմակերպուին նոր թեմեր եւ նոր եկեղեցիներ կը կառուցուին: Այդ օրերէն սկսեալ Հայաստանի մէջ հոգեւոր գործունէութիւնները կը ծաւալեն նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիները:

Ուրեմն...

1441էն ասդին հայեր ունին երկու կաթողիկոսներ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց (Ս. Էջմիածինի), եւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: 1915ի Յեղասպանութենէն ետք Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը տեղափոխուի Սիւքադաքէն դէպի տարբեր կեդրոններ եւ վերջապէս կը հաստատուի Լիբանան՝ Անթիլիաս, 1930 թ.ին:

Հայկական Եկեղեցին ունի նաեւ երկու անկախ Պատրիարքարաններ՝ Երուսաղէմի (638 թ.) եւ Իսթանպուլի (Կոստանդնուպոլսոյ) (1463 թ.) մէջ:



Երկար դարերու տառապալից պատմութեան հանդերձ, հայեր պահեցին իրենց կրօնքն ու ազգը: Հայ քրիստոնէան այսօր մարտահրաւէրի մը դիմաց է՝ իր հաւատքն ու աւանդութիւնը վերստին բացատրելու, ժամանակակից եւ հասկնալի ոճով մը, որ կարողանայ համապատասխանիլ ներկայ դարուն մտածողութեան եւ գոյացական իրականութեան: Ինչպէ՞ս կրնանք այսօր բացատրել մեր հաւատքը:



14. Դէմքեր Հայ Առաքելական Եկեղեցիէն

Աղօթքի Մարդ՝ Գրիգոր Նարեկացի

Ս. Գրիգոր Նարեկացի (950-1010)

Սրտի Խորերէն Աստուծոյ Հետ Խօսք՝



«Սրտիս հեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակը քեզի կը վերընծայեմ, ո՛վ գաղտնիքները տեսնող Տէր, եւ այրուող Հոգիիս թախծութեան կրակին վրայ դնելով սասանած մտքիս ճենճերող իղձերուն պտուղը, կամքիս բուրվատուլը քեզի կը ձօնեմ զայն: Գթած, հին Օրէնքի ողջակէզին թանձրածուխ զոհէն աւելի, իմ այս պատարագի՛ն նայէ, եւ հոտոտէ՛ զայն: Հաճութեամբ եւ ոչ թէ բարկութեամբ ընդունէ այս սակաւամասն խօսքերու յեռուածքը: Բանական զոհ մըն եմ ես. Հոգիիս խորհրդակիր սենեակին զգայութեանց խորքէն ելած կամաւոր նուէրը թող շուտով հասնի քեզի, մեղքերուս պարարտութեան ճարպին միջոցաւ ողջակիզուելով»:

Քաղուած՝ Նարեկ
Աղօթամատենանէն

Այսպիսի գրիչի տէր, աղօթքի եւ հոգիի մարդ էր Նարեկացին: Ան եղած է վարդապետ, միսթիք գրող, հոգեւոր բանաստեղծ, երաժիշտ եւ փիլիսոփայ: Իր օրերուն Վանական Ծարժումը^{††} (որ սկսած էր 5րդ դարուն) կը հասնի իր գագաթնակէտին:

Նարեկ Վանայ լիճին հարաւը գտնուող գիւղ մըն էր, Ռշտունեաց գաւառին մէջ: Կը պատմուի թէ Բագրատունեաց Թագաւորութեան օրերուն մօտ 2000 հայկական վանքեր կային, որոնցմէ մօտ 189ն կը գտնուէին Վասպուրականի մէջ՝ Վանայ լիճին շուրջ: Անանիա անունով վարդապետ մը (Նարեկացիին մօր հօրեղբայրը), որ իր ժամանակի ամենազարգացած հոգեւորականներէն էր, 10րդ դարուն սկիզբները կը հիմնէ վանք մը Նարեկ գիւղին մէջ, որ կը դառնայ հոգեւոր եւ կրթական օճախ:

Հոն Գրիգոր եկեղեցական դաստիարակութիւն ստանալով դարձաւ Հայ Եկեղեցոյ հոգեւոր գրականութեան ամենակարեւոր դէմքերէն մէկը: Նարեկ գիւղին անունով ալ կոչուեցաւ՝ Նարեկացի: Գրիգոր եղած է իր երեք եղբայրներուն կրտսերագոյնը: Մայրը, անոր ծնունդէն ետք մահանալով, Գրիգոր կը մնայ իր հօր հոգատարութեան ներքեւ: Հայրը, որ եղած է քահանայ, մեծ դեր ունեցած է անոր հոգեւոր աճման վրայ:

Գրիգոր Նարեկացի, կանուխ հասակէն եղած է աշակերտ Նարեկի վանքին մէջ: Հոն երկար ժամանակ տրամադրած է ուսումի, Եկեղեցոյ Հայրերուն

^{††} **Վանականութիւնը** Քրիստոնէական կեանքի մէկ արտայայտութիւնը եղած է, որ հիմնուած է այն համոզումին վրայ, թէ քրիստոնէան կ'ապրի այս աշխարհին մէջ, սակայն չի պատկանիր այս աշխարհին: Հետեւաբար անհատը կը հեռանայ այս աշխարհի անցողական հաճոյքներէն եւ հարստութիւններէն, ուրիշներու հետ միանալով կը բաժնեկցի անոնց հետ՝ աղօթքի, հոգեւոր աշխատանքի եւ սերտողութեան յատուկ կարգ ու կանոնով կեանք մը:

գրութիւնները սերտելու, ինչպէս նաեւ եկեղեցական արարողութիւններուն մասնակցելու: Այս վարդապետ ձեռնադրուելով իր կեանքը նուիրած է հոգեւոր ասպարէզին:

Գրիգոր Նարեկացի ապրած է Բագրատունեաց Թագաւորութեան ընթացքին (10րդ դարու վերջը), երբ հոգեւոր առաջնորդներու մեծագոյն նպատակն էր մտաւորական կեանքի բարգաւաճումը եւ զարգացումը: Հետեւաբար, իր ժամանակի այս ձգտումներն ու բարձր բարոյական եւ մտաւորական յատկանիշները մեծ դեր ունեցած են իր նկարագրին կազմուելուն մէջ, որոնց որպէս արդիւք, ինք ալ եղած է խոհեմ եւ հանճարեղ:

Սակայն միշտ ալ Աստուածաշունչը եղած է Նարեկացիին ներշնչման առաջին աղբիւրը: Յաճախ ան մէջբերումներ ըրած է Աստուածաշունչէն եւ դիմած է այդ համարներուն՝ իր գրութիւններուն մէջ:

Նարեկացի ճանչցուած է որպէս բանաստեղծ: Ան նաեւ յօրինած է շատ մը տաղեր, որոնք կ'երգուին եկեղեցական յատուկ տօնական օրերուն:

Նարեկ-Աղօթամատեանը, աւելի ճիշդ՝ «Մատեան Ողբերգութեան»ը, ինչպէս ի՛նք վերնագրած է, եղած է Նարեկացիի վերջին գործը, որ ամբողջացուցած է 1002 թ.ին: Նարեկացիի այս գործը կը նկատուի համաշխարհային գլուխ գործոց, որ կը ցոլացնէ անոր միտքն ու հոգին: Գիրքը կը բաղկանայ 95 ողբերէ կամ աղօթքներէ, որոնք մենախօսութիւններ են Աստուծոյ հետ:

Նարեկացիի համար, Քրիստոնեայ հաւատքին մէջ անհրաժեշտ է որ մեղաւոր մարդ արարածը հանդիպի Սուրբ Աստուծոյ



հետ: Այս հանդիպումը հնարաւոր կը դառնայ միայն Աստուծոյ շնորհքին միջոցով, երբ հաւատացեալը կ'աղօթէ եւ իր սիրտը կը բանայ Աստուծոյ ու կը ձերբազատուի իր մեղքերու կապանքէն եւ կը հասնի Աստուծոյ, այսինքն կը միանայ Աստուծոյ:

Կարելի է հոս նաեւ մէջբերել Նարեկացիի ուրիշ գործէ մը՝ «Խրատ Ուղիղ Հաւատքի եւ Առաքինի Մաքուր Վարքի» ուր ան կը նկարագրէ Տէր Յիսուսը՝

«Բանը մարդկային բոլոր կիրքերը կրեց, բացի մեղքէն: Այսինքն անօթեցաւ՝ Ան որ բոլոր ապրողներուն կերակուր կու տայ. ծարաւեցաւ՝ Ան որ իրեն հաւատացողներուն կեանքի ջուրը կը պարգեւէ. յոգնեցաւ՝ Ան որ յոգնածներուն հանգիստն է. քնացաւ՝ Ան որ արթնութեամբ կը հսկէր Իսրայէլի վրայ. լացաւ՝ Ան որ բոլոր դէմքերէն ամէն արցունք սրբեց. աշխարհի վրայ շրջեցաւ երեսուն տարիներ, իր աստուածութեան փառքը առանց յայտնելու, մինչեւ կատարեալ հասակին լրումը:»^{‡‡}

^{‡‡} Խրատ Ուղիղ Հաւատքի եւ Առաքինի Մաքուր Վարքի Նարեկացիի այս գործը թարգմանած եւ ներկայացուցած է յատուկ ուսումնասիրութեամբ Նարեկ Եպս. Ալեէմէզեան 2002 թուականին:



«Սրտիս հեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակը քեզի կը վերընծայեմ, ո՛վ գաղտնիքները տեսնող Տէր, եւ այրուող Հոգիիս թախծութեան կրակին վրայ դնելով սասանած մտքիս ճենճերող իղձերուն պտուղը, կամքիս բուրվառովը քեզի կը ձօնեմ զայն»:

Նարեկացիին այս խօսքերը մեզ կ'անդրադարձնեն թէ մարդ, մարդկութեան մէջ այնքան կը մեծնայ եւ կը դառնայ հասուն որքան ինքզինք նուիրէ Աստուծոյ եւ կարողանայ իր սիրտը Աստուծոյ ներկայութեան բանալ եւ զայն քննութեան ենթարկել: Մեր կեանքերը Աստուծոյ նուիրելով զանոնք նուիրած կ'ըլլանք մեր բարեկամին եւ նոյնիսկ օտարին, որովհետեւ Աստուծոյ պատկերը այդ օտարին մէջ ալ ներկայ է:



15. Դեմքեր Հայ Առաքելական Եկեղեցիէն Բ. Մեծ Վարդապետ՝ Գրիգոր Տաթևացի

Գրիգոր Տաթևացի (1346- 1410)



Ս. Գրիգոր Տաթևացի, ծնած է 1346ին Վայոց Ձորի մէջ, Դուինի արեւմուտքը: Մանուկ հասակէն իսկ եղած է ուշիմ եւ բարի: Ան 15 տարեկան էր երբ Թիֆլիսի մէջ կը հանդիպի հռչակաւոր Վարդապետ՝ Յովհաննէս Որոտնեցիին, եւ անոր աշակերտը դառնալով ու բարձր ուսում ստանալով, կ'ըլլայ Ուղղափառ հաւատքի եւ աստուա-

ծարանութեան մեծ Վարդապետ:

1373 թ.ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ Գրիգոր անունը ստանալով:

Գրիգոր Վարդապետ հաւատարմօրէն կը ծառայէ Հայ Առաքելական Եկեղեցիին եւ կը դառնայ անոր մեծագոյն գիտնականներէն մէկը:

Յովհաննէս Որոտնեցիի մահէն ետք, Գրիգոր Վարդապետ կը դառնայ Ապրակունեաց վանքին ուսուցչապետը: Հոն երկու տարիներ մնալէ ետք, 1390ին կ'անցնի Տաթևի վանքը (Հայաստանի հարաւը), ուր իր ջանքերով կը զարգանայ եւ ինք ալ մեծ թիւով աշակերտներ կ'ունենայ:



Տաթևի վանքը՝ իր սպրած օրերուն

Տաթևի վանքը (Հայաստանի հարաւը), ուր իր ջանքերով կը զարգանայ եւ ինք ալ մեծ թիւով աշակերտներ կ'ունենայ:

Գրիգոր Վարդապետ 20 տարիներ կը մնայ Տաթևի վանքը, որով կը կոչուի Տաթևացի: Տարբեր կողմերէն աշակերտներ կու գային Տաթևի դպրեւանքը ուսանելու, եւ Գրիգոր Վարդապետ, որեւէ ջանք չէր խնայեր դպրեւանքին բարելաման համար:

Տաթևացիին օրերուն յատուկ ջանք կը տարուէր Կաթողիկէ (Հատին) միսիոնարներու կողմէ քարոզչութեամբ իրենց եկեղեցւոյ եւ իրենց եկեղեցական իշխանութեան ենթարկելու հայերը: Անոնք որոնք կը յարէին եւ կը միանային Կաթողիկէ դաւանանքին կը կոչ-



Տաթևի վանքը ներքայիս.

Արեւած հանգստեցէ՛

ուէին Միաբարներ կամ Ունիթոներ: Ասոնց դէմ կը պայքարի Գրիգոր Տաթևացի, շեշտելով Հայ Առաքելական Եկեղեցւոյ ուղղափառ հաւատքը:



Գրիգոր Տաթևացիին ջանքերով էր որ իր մահէն ետք (1441 ին) Էջմիածին դարձեալ կը նկատուի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեդրոն:

Գրիգոր Տաթևացիին գործերէն մեծագոյնը «Հարցմանց Գիրք»ն է (որ աւարտած է 1397 ին), որուն մէջ Վարդապետը հարց-պատասխանի ձեւով կը բացատրէ Ուղղափառ հաւատքն ու աստուածաբանութիւնը:

Վարդապետին այլ գործերէն կարելի է յիշել «Ամարան ու Չմերան»ը, որուն մէջ կը կարդանք իր

քարոզները, նաև Պօղոս առաքելի 14 թուղթերուն մեկնությունը եւ «Լուծմունք Աւետարանի Մատթէոսի» ... ելն:

1408ին ստիպուած ձգելով Տաթևի վանքը (թշնամիներու յարձակումներու պատճառով) Վարդապետը կ'ուղղուի դէպի Վասպուրական: Ապա, 1410ին, վանք վերադառնալով, անկարող կը դառնայ շարունակել ուսուցչական իր ասպարէզը հիւանդութեան պատճառով, եւ նոյն տարուան մէջ կը մահանայ:



Պատմութեան ընթացքին յատուկ անձեր հիմնաքարեր դրած են Եկեղեցւոյ եւ հաւատքի ճամբուն վրայ: Այսօրուան հայ երիտասարդը ինչպէ՞ս կրնայ օժանդակել եւ իր բաժինը բերել ազգին եւ հաւատքին պահպանումին եւ զանոնք գալիք սերունդներուն փոխանցումին:



16. Կաթողիկե Եկեղեցին Ա. Պատմական Ակնարկ

Մինչեւ 1054 թ. կարելի չէ բաժնել Հռոմէական Եկեղեցւոյ կառոյցը ընդհանուր Եկեղեցւոյ կարոյցէն. սակայն 1054ին յստակ բաժանում տեղի ունեցաւ Բիւզանդական եւ Հռոմէական եկեղեցիներու միջեւ: Առաջինը կոչուեցաւ Ուղղափառ, իսկ երկրորդը՝ Կաթողիկե (ընդհանրական): Այս բաժանումին 16րդ դարուն, կը յաջորդէ Բարեկարգեալ եկեղեցիներու բաժանումը:

Քրիստոնէութեան (յատկապէս Կաթողիկե Եկեղեցւոյ) պատմութեան մէջ կարելի է յիշել հետեւեալ պատահարները:

■ Առաջին մեծ փոփոխութիւնն էր երբ Քրիստոնէութիւնը, առաջին դարուն, իր մայր կեդրոնէն՝ Պաղեստինէն տարածուեցաւ Միջերկրկական ծովու շրջակայքի երկիրներուն մէջ:

■ Երկրորդ դարու կիսուն, արդէն եպիսկոպոսի դրութիւնը յառաջ եկած էր:

■ 313ին Քրիստոնէութիւնը կը հռչակուի որպէս ընդունուած կրօնք Կայսրութեան մէջ:

■ 5րդ դարուն, Հռոմի եպիսկոպոսը (Պապը) ունէր յատուկ հեղինակութիւն այլ եկեղեցիներու վրայ, ինչպէս նաեւ թագաւորութիւններու եւ իշխանութիւններու վրայ: Այս իրողութեան պատճառը, Հռոմէական Կայսրութեան անկումով ստեղծուած քաղաքական դատարկութիւնն էր:

■ Միջին դարերու սկիզբը (7-11րդ դարերու միջեւ), Հռոմէական Կայսրութեան անկումով (476 թ.ին), եւ կայսրերու ու թագաւորներու եկեղեցիին իշխանութենէն աւելի բարձր իշխանութիւն ունենալու նպատակով, Հռոմի Եպիսկոպոսին հեղինակութիւնը կը պակսի:

■ 11րդ դարուն, բարեկարգեալ պապականութեան առաջնորդութեամբ, եպիսկոպոսական իրաւունքները եւ հեղինակութիւնը կը վերահաստատուին, եւ աւելիով կը շեշտուի Պապին իշխանութիւնը: Այս մէկը, առաւել՝ Խաչակիրներու կատարած ժխտական դերը Արեւելեան եկեղեցիներուն հանդէպ, հաշտութեան արգելք կը դառնան Ուղղափառ (Արեւելեան) եւ Կաթողիկէ (Արեւմտեան) եկեղեցիներուն միջեւ:

Կաթողիկէ Եկեղեցին՝ ծագում եւ նպատակ

Կաթողիկէ [Catholic] բառը կը նշանակէ ընդհանրական: Կաթողիկէ Եկեղեցին ինքզինք կը նկատէ որպէս միակ օրինաւոր ժառանգորդը առաքելական ուսուցմունքներուն, որոնք Տէր Յիսուս իր առաքելներուն փոխանցած էր: Եկեղեցին առաքելական յաջորդականութիւնը պահելով, յատուկ հեղինակութիւն կը սահմանէ թէ՛ Պապին, թէ՛ Եկեղեցիին: Անոնք կը հիմնեն իրենց այս առաջաւորեալ դրութիւնը Մտ.16.16-18 հատուածին վրայ, որպէս Աստուծոյ նախախնամութեան նշան:

Եկեղեցական կազմակերպութիւն եւ աստիճանաւորումներ

Իւրաքանչիւր շրջանի եպիսկոպոսը կը ներկայացնէ այդ շրջանին մեծագոյն հոգեւոր հեղինակութիւնը: Եպիսկոպոսը պատասխանատու է նշանակելու վարդապետներ, որոնք այդ շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայութեան կը կանչուին:



Ս. Պետրոսի Եկեղեցին Վատիկան/Հռոմի մէջ, շինուած Ռիմ եկեղեցիին վրայ.
Առնուած համացանցէն



Վատիկանի դրոշակը . . .



Եւ Քաղաքը .

Առնուած համացանցէն

Եպիսկոպոսներուն կը յաջորդէ Եկեղեցոյ Բարձրագոյն Խորհուրդը, որ կը կազմուի կարտինալներէ (ներկայիս կան 163 կարտինալներ), որոնք միասնաբար կը ներկայացնեն Պապէն ետք բարձրագոյն հեղինակութիւնը եւ անոր համաձայնութեամբ կ'ընտրուին:

Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցոյ մեծագոյն հեղինակութիւնը Պապն է (Հռոմի եպիսկոպոսը), որ անսխալական կը նկատուի եւ որմէ կախեալ են եկեղեցական բոլոր կարեւոր որոշումները:

Պապական Աթոռը կը գտնուի Վատիկանի մէջ, որ ամէնափոքր անկախ երկիրն է: Վատիկանը կը կառավարուի Պապին կողմէ եւ կը գտնուի Հռոմի մէջ, Իտալիա:

Արեւելեան Կաթողիկէ Եկեղեցիներ

Արեւելքի Եկեղեցիները սկիզբէն Հռոմի հեղինակութիւնը չեն ընդունած: Սակայն պատմութեան ընթացքին այդ Եկեղեցիներու ժողովուրդներէն ոմանք կ'ընդունին Պապին հեղինակութիւնը եւ կը դառնան կաթողիկէ: Անոնք

Կաթողիկե եկեղեցիներ հիմնելով կը պահեն սակայն իրենց յատուկ պաշտամունքի օրէնքները, ծէսերը եւ լեզուները:

Հետեւեալները Արեւելեան Կաթողիկե եկեղեցիներն են, ըստ իրենց Կաթողիկե դաւանանքը ընդունելու յաջորդականութեան:

- Մարոնիթ (12րդ դար)
- Հայ Կաթողիկե (15րդ դար)
- Քաղդէացի (Ասորեցի Կաթողիկե) [Chaldeans] (17րդ դար)
- Ասորի (Սուրիանի) Կաթողիկե [Syriac] (17րդ դար)
- Ղպտի Կաթողիկե [Copts] (18րդ դարուն)
- Յոյն Կաթողիկե [Greek Catholic-Melkite] (18րդ դարուն)

Մարոնիթները

Մարոնիթները [Maronites] Լիբանանի ամենամեծ հոգւոր մարմինն է: Անոնք Արեւելեան Եկեղեցիներուն կը պատկանին, որոնք հաղորդակցութեան մէջ կը մտնեն Կաթողիկե Եկեղեցիին հետ 1182 էն ի վեր:

Մարոնիթներ իրենց անունը առած են 4րդ դարու սուրիանի վարդապետ՝ Ս. Մարունի անունէն, որ հաւանաբար Սուրիոյ արեւմուտքին Որոնդէս գետին մօտ ճգնատրի կեանք ապրած է. Հոն, ըստ աւանդութեան, 452 ին Ս. Մարունի հետետորդները իր անունով վանք մը կը հիմնեն: Կրօնական հալածանքներու արդիւնքով, 7րդ դարէն սկսեալ, Մարունի հետետորդները կը գաղթեն Սուրիայէն եւ ապաստան կը գտնեն նախ Լիբանանի հիւսիսը, ապա կը հաստատուին Լիբանանի լեռնային շրջանը (Mount Lebanon): Մարոնիթները ունին իրենց յատուկ ծէսերը եւ արարողութիւնները, որոնք մասամբ կը կատարուին ասորերէնով: Հոմֆի հեղինակութիւնը

ընդունելով, որոշ լատինական ազդեցություն կը մտնէ իրենց պատարագամատոյցին մէջ (այսինքն իրենց աղօթքի, պաշտամունքի եւ հաղորդութեան արարողութեան մէջ): Մարոնիթ Եկեղեցին կը գլխաւորէ պատրիարքը, որուն աթոռը Լիբանան՝ Պքըրքէի մէջ է:

Յոյն Կաթողիկէ Եկեղեցին

Յոյն Կաթողիկէ Եկեղեցին [Melkite Church] կազմուած է այն Արեւելեան Կաթողիկէ եկեղեցիներէն, որոնք բուն Երուսաղէմի, Աղեքսանդրիոյ, եւ Անտիոքի պատրիարքութիւններուն հետեւող քրիստոնեաներէն էին: Անոնք ընդունելով Քաղկեդոնի սահմանած հաւատոյ հանգանակը, որ կայսրին կողմէ ընդունուած էր որպէս պաշտօնական վարդապետական կանոն, կը ստանան [Melkite] անունը, որ կը թարգմանուի՝ մելքիտեան, այսինքն՝ Կայսրին հետեւող:

1054ի բաժանումին արդիւնքով, անոնք Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն կը յարին, սակայն յաջորդող դարերուն, անոնցմէ ոմանք դարձեալ կը միանան Հռոմի Եկեղեցիին եւ կը ճանչցուին որպէս Յոյն Կաթողիկէ Եկեղեցի:

Կաթողիկէ Եկեղեցոյ սրբուհիներէն՝

Սրբուհի Թերեզա
(1873-1897)

Սրբուհի Թերեզա [St. Thérèse of Lisieux] Կաթողիկէ Եկեղեցոյ կողմէ ամենասիրուած սրբուհին է: Թերեզա ֆրանսացի էր եւ իր մանկութենէն ունէր



Անուած Խամացանցէն

խոր հաւատք: 15 տարեկանին մտած է Կարմելեան [Carmelite] Վանք Ֆրանսայի Լիզիոյ քաղաքին մէջ, ուր մնացած է ինը տարիներ մինչեւ իր մահը:

Թերեզա պաքարած է այդ օրերու կրօնական ճնշումներուն դէմ: Մանր գործերով իսկ յայտնած է իր սէրը Աստուծոյ հանդէպ: Միշտ շեշտած է սէրը որպէս կարենորագոյն պատգամը Քրիստոնէական Հաւատքին: Աստուած սէր է եւ Քրիստոսի խաչը այդ սէրը կը յայտնէ մարդկութեան: Կաթողիկէ Եկեղեցին ընդունելով Թերեզայի սրբութիւնը, ընդունած կ'ըլլայ իր պարզութիւնն ու սէրը, ինչպէս նաեւ բոլոր համրերը, զրկուածները, յուսահատները եւ լքեալները եւ անոնց հոգատարութեան կարենորութիւնը:

Սրբուհի Թերեզա ըսած է՝

«Գիտէք թէ մեր Տէրը չի նայիր մեր կատարած գործերուն մեծութեան կամ անոնց խրթին ընթացքին, այլ անոնց ետին մեր ունեցած սիրո՞յն, որմով կրնանք ամբողջացնել այդ գործերը»: «Մեր Տէրը չ'ակնկալեր մեզմէ մեծ գործեր կամ խոր մտածումներ եւ խորհուրդներ: Ան կը գնահատէ պարզութիւնը»:



Շատ յաճախ փոքր գործերու մէջ հաւատարիմ ըլլալ աւելի դժուար է քան՝ մեծ պաշտօններ վերցնել: Մարդ արարած ընդհանրապէս կը ցանկայ մեծ պատասխանատուութիւններ ստանձնել, սակայն մանր արարքներու մէջ մարդուն իրականութիւնը կը յայտնուի:



17. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն Բ. Ֆրանսիս Ասիզի

Ֆրանսիս Ասիզի (1182- 1226)

Ֆրանսիս Ասիզի [Francis of Assisi] Իտալացի միստիք եւ քարոզիչ, հիմնադիրը Ֆրանսիսքեան [Franciscan] շարժումին:

Բուն անունով՝ [Giovanni Francesco Bernardone], ծնած է Իտալիոյ Ասիզի քաղաքին մէջ: Անոր հայրը իր քաղաքին ամենամեծ կտաւի վաճառականներէն էր, իսկ մայրը՝ բարեպաշտ կին մը, որ իր զաւակը Քրիստոնէական ուսուցմունքներով դաստիարակած էր:



Ֆրանսիս նախ ապրած է անհոգ կեանք մը, մեծ գումարներ ծախսելով հագուածքի եւ հաճոյքի համար: 19 տարեկան էր երբ պատերազմի մը ընթացքին, տարի մը որպէս գերի կը բանտարկուի, որուն ընթացքին կը տառապի ծանր հիւանդութենէ: Բանտարկութեան այս շրջանէն ետք, 1205ին իր քաղաքը կը վերադառնայ ամբողջապէս փոխուած: Ան կը սկսի բարեսիրական իր ծառայութիւնները բորոտներու եւ աղքատներու նկատմամբ, ինչպէս նաեւ կ'աշխատի վերաշինելու քանդուած եկեղեցիները:

Ֆրանսիսի այս աշխատանքը կը բարկացնէ իր հայրը, որ վերջապէս կը զրկէ զայն ժառանգէն եւ իր բոլոր ստացուածքէն: 1208ին աղօթքի մը ընթացքին, Ֆրանսիս կը լսէ Տէրոջ ձայնը, որ զինք կը կանչէ հի-

ւանդներու եւ աղքատներու ծառայութեան: Ան հիմնուելով Մտ.10.5-14 համարներուն վրայ, կ'որոշէ ապրիլ առանց ոչ մէկ ստացուածք ունենալու, կատարելապէս աղքատ, ինչպէս Տէր Յիսուս կը պատուիրէ՝

«Մի՛ ստանաք ոսկի եւ ո՛չ արծաթ եւ ո՛չ պղինձ ձեր գօտիներուն մէջ: Ո՛չ ճամբու համար պարկ եւ ո՛չ կրկին հանդերձ, ո՛չ կօշիկ, ո՛չ գաւազան» (Մտ.10.9-10):

Ֆրանսիս կը սկսի քարոզել եւ իր շուրջ կը հաւաքուին 12 աշակերտներ, որոնք կը դառնան բուն հիմնադիրները այս կրօնական խումին [Franciscan Order] .

1212ին Ֆրանսիս կ'ընդունի այս խումբին մէջ մայրապետ մը Ասիզի քաղաքէն՝ Բլէր անունով, եւ իրմով կը սկսի աղջիկներու խումբը՝ [the Order of the Poor Ladies] :

Ֆրանսիս ըրած է քանի մը ճամբորդութիւններ դէպի Երուսաղէմ, Սպանիա, ինչպէս նաեւ Եգիպտոս, քարոզելու եւ կարիքաւորներուն ծառայելու: Ան իր քաղաքը վերադառնալով եւ իր խումբին մէջ անհամաձայնութիւն գտնելով կը հրաժարի առաջնորդ ըլլալէ:

1224ին, 40 օր ծմապահութենէ ետք, մինչ Ֆրանսիս կ'նախաձեռնէ լերան մը վրայ, ան ցաւ կը զգայ եւ կ'ըստի թէ Յիսուսի խաչելութեան նշանները կ'երեւին իր մարմնին



Դասկերը կը ներկայացնէ Ֆրանսիսին հանդիպումը պապին հետ եւ իրմէ արտօնութիւն ստանալը ըստունակելու իր առաջնորդինը:
Ամուսան Ռամսաւանցեմ

վրայ: Ան իր կեանքին վերջին տարիները կը տառապի ֆիզիքական ցաւերէ, եւ գրեթէ ամբողջական կուրուրտենէ:




Ֆրանսիս Ասիզի օրինակ է ազատ մարդուն. ան որեւէ մէկ ձեռով գերին չդարձաւ հարստութեան կամ ստացուածքի, ոչ ալ մարդկային զօրութեան կամ իշխանութեան: Ասիզի կրցաւ պարզապէս լքել ամէն ինչ, գիտնալով թէ այդպիսով մարդ իր իրական ինքնութիւնը կը գտնէ: Ո՛չ հարստութիւն, ո՛չ ստացուածք, ո՛չ ալ իշխանութիւն կրնան մարդը շինել, այլ մարդուն իրականութիւնը արդէն Աստուծմէ տրուած է իրեն իր խորքին մէջ. մարդուն կը մնայ զայն պրպտել, գտնել եւ ի յայտ բերել:

Ասիզի ինքզինք աղքատին եւ բորոտին հետ նոյնացնելով կը հետեւի Յիսուսի օրինակին: Ան նաեւ կրցաւ միաբանիլ ամբողջ ստեղծագործութեան հետ. ստեղծագործութեան մէջ ո՛չ միայն մարդ, այլ իւրաքանչիւր կենդանի էակ եւ ամբողջ բնութիւնը ունի իր նշանակութիւնը եւ կարելոր դերը: Աստուած ամբողջ ստեղծագործութեան Աստուածն է եւ մարդուն կ'իյնայ այդ ստեղծագործութեան հոգ տանիլ:

18. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն Գ. Թովմաս Աքրոինացի

Սուրբ Թովմաս Աքրոինացի (1224–1274)

Թովմաս Աքրոինացի [Saint Thomas Aquinas] կը նկատուի միջնադարեան մեծագոյն փիլիսոփայ աստուածաբանը եւ Կաթողիկէ Եկեղեցոյ մեծագոյն մտաւորականներէն մէկը: Անոր գրութիւնները մինչեւ այսօր կը սերտուին:



Թովմաս ծնած է իտալական բարձր դասակարգի պատկանող ազնուական ընտանիքի մը մէջ: Հինգ տարեկան էր, երբ իր ծնողքը դրկած են գինք վանք, ուր կը մնայ մօտ ինը տարիներ: Այնտեղ վարդապետներէն շատ բան սորվելով, ի յայտ կու գայ իր մեծ փափաքը եւ ծարաւը սերտողութեան եւ ընթերցանութեան հանդէպ: 1239ին կամքէ անկախ պատճառներով կը ստիպուի ձգել վանքը եւ իր հօր տունը վերադառնալով, այս անգամ կը դրկուի Նաբոլիի համալսարանը, իր ուսումը շարունակելու:

Թովմաս մեծ հաճոյք կը գտներ սերտողութեան եւ աղօթքի մէջ: Ան նաեւ վարդապետներու հետ ապրելով, մեծ փափաք կը յայտնէ ինք անձամբ ապրելու վարդապետի մը կեանքը:

1244ին հայրը կը մահանայ: Թովմաս 20 տարեկանին լաւ ուսման տէր երիտասարդ մը դարձած էր: Ան կ'որոշէ մտնել Տոմինիքեան [Dominican] վանք, վարդապետական կոչումի նուիրուելով: Թովմասի մայրը լսելով, կը բարկանայ եւ Թովմասի երկու եղբայրները, որոնք

Կայսրին բանակին մէջ մեծատրներ էին կը դրկէ իրեն մօտ, որպէսզի ճնշում բանեցնեն Թովմասի վրայ՝ հրաժարելու իր որոշումէն: Սակայն Թովմաս տարի մը ուշացումէ ետք կը յաջողի ճամբորդել Փարիզ, ուր նուիրուելով Տոմինիքեան վարդապետութեան, շուտով կը ճանչցուի իբրեւ փիլիսոփայութեան մէջ ճարտար անձ մը:

25 տարեկան հասակին, իր պատասխանատուները զինք քահանայական տիտղոսի կը կանչեն: Պապը նոյնիսկ կ'առաջարկէ իրեն Նաբոլիի եպիսկոպոսական աթոռը, սակայն մեր խոնարհ վարդապետը կը մերժէ բարձր տիտղոսները եւ կ'ընտրէ ընթերցել, յօրինել եւ ուսուցանել: Ան կ'ընտրէ գերծ մնալ աշխարհի իշխանութիւններէ եւ տիտղոսներէ եւ այսպիսով ան քայլ մը եւս կը քալէ սրբութեան ճամբուն վրայ:

Թովմաս իր բարձրագոյն ուսումը աւարտելէ ետք, Փարիզի Աստուածաբանական Համալսարանին մէջ ուսուցիչ կը դառնայ: Անոր ուսուցանելու մեթօտը, նիւթը եւ լեզուն ... ամէն բան, նորութիւն էր աշակերտներուն համար: Թովմաս 22 տարիներ կը շարունակէ ուսուցանել Փարիզի, Հռոմի եւ Նաբոլիի մէջ. ան նաեւ կը յօրինէ, կը քարոզէ եւ Քրիստոնէական հաւատքը կը պաշտպանէ: Անոր հոշակը կը տարածուի ամէն կողմ:

Ուսուցչութեան կողքին, Թովմաս յաճախ ընտրուած է որպէս պապերուն խորհրդատու: Հակառակ իր բարձր պաշտօններուն, ան իր կեանքին մեծ մասը անցուցած է իր սենեակին մէջ. ան գոհունակ էր իր պարզ հագուածքով եւ ուտեստեղէնով:

1274ին Պապը ժողովի կը կանչէ բոլոր եպիսկոպոսները՝ Ֆրանսայի Լիոն քաղաքին մէջ: Թովմաս ալ հրաւիրուած էր: Սակայն ճամբորդութեան ընթացքին կը հիւանդանայ եւ մէկ ամիս տառապելով՝ կը մահանայ:

Իր գրությունները

Մարդկային միտքը ապշած կը մնայ Թովմաս Աքուինացիի գրություններուն դիմաց, որոնք կարճ ժամանակամիջոցի մէջ գրուած են (մօտ 22 տարիներու ընթացքին): Անոնք արդիւնքն են Աստուծոյ հանդէպ իր խոր հաւատքին եւ սիրոյն: Անոնցմէ կարեւորագոյնը [Summa Theologica], որ աստուածաբանական ամփոփումներ է եւ կը բացայայտէ Թովմասի միտքն ու աստուածաբանութիւնը: Այս հաւաքածոյին մէջ Թովմաս տրամաբանական ձեւով կը ներկայացնէ աստուածաբանական եւ փիլիսոփայական նիւթեր: Միջնադարեան գիտութիւնը կը բնորոշուի Թովմասի այս գիտական եւ իմաստասիրական մեթոտով, որ կը կոչուի՝ Դպրոցականութիւն [scholastic method]: Իսկ անոր ուսուցանած գաղափարները կը յայտնուին Թովմայական դպրոցին միջոցով:

Թովմաս իր գրություններուն մէջ կը յայտնէ հինգ փաստեր Աստուծոյ գոյութեան, որոնցմէ առաջինին կարելի է հոս անդրադառնալ: Թովմաս կը բացատրէ թէ կեանքի մէջ ամէն ինչ շարժման մէջ է եւ ուրիշէ մը մղուած կը շարժի: Հետեւաբար, պէտք է որ հոն ըլլայ սկզբնական շարժում պատճառող մը, որ ինքնին անշարժ է [The unmoving mover]:



Անտարակոյս, Թովմաս Աքուինացի մեծապէս նպաստած է մարդկային փիլիսոփայական եւ աստուածաբանական մտածողութեան: Սակայն այսօր կ'արժէ հարց տալ՝ արդեօք մարդկային տրամաբանութիւնը կարո՞ղ է հասկնալ եւ թափանցել աստուածային խորքն ու իրականութիւնը: Արդեօք մարդկային գիտութիւնը կարո՞ղ է փաստել Աստուծոյ ներկայութիւնը:

Դպրոցականութիւնը, որուն հիմքը դրաւ Աքուինացին, իր հերթին դարձաւ Արեւմտեան աստուածաբանութեան հիմքը, որ դարերու ընթացքին շարունակած է շեշտել մտքին կարելոր դերը զԱստուած ճանչնալու:



19. Դէմքեր Կաթողիկէ Եկեղեցիէն Դ. Մայր Թերեզա

Մայր Թերեզա (1910–1997)



Անուած համացանցէն

Մայր Թերեզա եղած է Կաթողիկէ մայրապետ եւ գթութեան միսիոնարութիւններու [Missionaries of Charity] հիմնադիր.

Ան ծնած է Ալպանացի ընտանիքի մը, Եուկոսլաւիոյ մէջ: 18 տարեկանին մտած է քոյրերու վանք մը Իրլանտայի մէջ: Մարգուած է Իրլանտայի Տապլին քաղաքին մէջ, նաեւ Հնդկաստանի մէջ իր ուխտը կատարելէ առաջ 1937ին: Իր անունը առած է Սրբուհի Թերեզայէն:

Մինչ Մայր Թերեզա կը տնօրինէր Կաթողիկէ բարձրագոյն վարժարան մը Հնդկաստանի Կալկաթա քաղաքին մէջ, մեծապէս կ'ազդուի աղքատներու եւ հիւանդներու տեսարաններով, որոնք ճամբաներու եզերքները կը տարածուէին: 1948ին յատուկ արտօնութիւն տրուեցաւ իրեն

ձգելու վանքը եւ սկսելու առաքելութիւն մը հիւանդներու եւ զրկուածներու հետ:

1950ին, Մայր Թերեզա եւ իր բարեկամուհիները կը ճանչցուին Կալկաթայի Արքեպիսկոպոսական Թեմէն, որպէս Գթութեան Քոյրեր: Յետագային, խումբը կը ստանայ պապական իրաւասութիւն եւ կ'ենթարկուի Հռոմի հեղինակութեան: Գթութեան Քոյրերու խումբին միացողներ, չորս տեսակ ուխտեր ընելու են՝ հիմնական երեք ուխտերու կողքին, որոնք են՝ աղքատութիւն, կուսութիւն եւ հնազանդութիւն, նաեւ ուխտելու են աղքատներու ծառայութիւն:

Մայր Թերեզա կը տարածէ իր այս աշխատանքը աշխարհի տարբեր երկիրներու մէջ: 1979ին կը ստանայ Նոպէլեան Խաղաղութեան Մրցանակը. 1990ին իր առողջութիւնը կը սկսի վատթարանալ: Բանի մը տարիներ ետք Մայր Թերեզա կը մահանայ եւ շատեր կը սգան իր մահը:



Եթէ Մայր Թերեզա այսօր ապրէր, մեզի հետեւեալը պիտի պատուիրէր՝

«Ապրեցէ՛ք պարզութեամբ. իրարու պարզութեան մէջ օրինակ եղէ՛ք. աղքատութեան հոգին Աստուծոյ վրայ կատարեալ վստահութիւն կ'ենթադրէ. վստահեցէ՛ք իրեն: Սիրեցէ՛ք աղքատներուն մէջ ամենաաղքատը եւ իր հետ եղէ՛ք. հաւանաբար տառապանք եւ վիշտ ակնկալելու էք: Տառապանքը նշան է թէ Յիսուս մօտ է եւ ձեզ կը հսկէ».^{§§}

^{§§} *Mother Teresa, My Life for the Poor, 1985.*

20. Աւետարանական Եկեղեցին Բարեկարգումի Շրջան

Կաթողիկէ Եկեղեցին բարեկարգութենէ առաջ

Միջնադարը (500-1300) Արեւմտեան պատմութեան մէջ գիտցուած է որպէս «Խաւար Դարեր» եւ բնորոշուած է մտքի եւ մշակոյթի անկումով: 13րդ դարու Կաթողիկէ Եկեղեցոյ պապականութիւնը կը սկսի ենթարկուիլ յարձակումներու: Տարբեր պատճառներ կային, որոնք Եկեղեցին խոցելի կը դարձնեն եւ բարեկարգութիւնը անհրաժեշտ: Այդ պատճառներէն կարելի է յիշել հետեւեալները. –

1. Եկեղեցոյ ազահութիւնը եւ անոր անսահման կալուածներու տիրանալը, որոնք տուրքերէ զերծ էին եւ կը կազմէին մօտաւոր մէկ չորրորդը Եւրոպայի հողամասերուն,
2. Մեղքերու թողութեան համար յատուկ ներողագիրքեր կը ծախուէին. այս մէկը կը նշանակէր թէ ոեւէ մէկը կրնար մեղքերու թողութիւն ստանալ եկեղեցիին դրամ վճարելով,
3. Քահանաներու մտաւորական եւ բարոյական ցած մակարդակը,
4. Սուրբերու հանդէպ մատուցուած չափազանց մեծարանքը:

Վերածնունդի շրջան

1416րդ դարերուն, Եւրոպայի մէջ (յատկապէս Իտալիա, Անգլիա եւ Գերմանիա), սկիզբ կ'առնէ գեղարուեստական, մշակութային եւ մտաւորական զարգացում եւ արթնութիւն, որոնց արդիւնքով դարոցական եւ սկադեմական աշխատանքներ առաջնակարգ կը նկատուին եւ գիտութիւնը կը յառաջանայ: Տպագրութեան յառաջ-դիմութեան արդիւնքով, գիրքերը կը տարածուին Եւրո-

պայի մէջ, եւ աշխարհական ու սովորական մարդիկ նույնպէս կը սկսին սերտել եւ ուսանիլ: Այս շարժումը կը կոչուի Վերածնունդ կամ Զարթօնք [Renaissance]:

Բարեկարգումի նախնական փորձեր Անգլիոյ մէջ Ծոն Ուայքլիֆ (1331-1384)

Ծոն Ուայքլիֆ [John Wycliffe] եղած է 14րդ դարու Անգլիացի աստուածաբան եւ բարեկարգիչ: Ան կը քննադատէ Կաթողիկէ Եկեղեցոյ հեղինակութիւնը եւ մանաւանդ ներողագիրերու վաճառքը, եւ կը դիմէ Աստուածաշունչին, որպէս միակ հեղինակութիւնը: Ան կը թարգմանէ Աստուածաշունչը եւ կը սկսի քարոզել անգլերէնով, լատիներէնի փոխարէն: Այսպիսով աշխարհական մարդիկ, որոնք լատիներէն չէին գիտեր, առաջին անգամ ըլլալով կը կարենան Աստուածաշունչը կարդալ եւ հասկնալ:

Բարեկարգութեան Ծարժումը Գերմանիոյ մէջ Մարթին Լուտեր (1483-1546)

Մարթին Լուտեր եղած է Գերմանացի աստուածաբան եւ բարեկարգիչ: Իրմով սկսաւ Բարեկարգութեան Ծարժումը Գերմանիոյ մէջ: Իր ազդեցութիւնը մեծ էր Եւրոպայի կրօնական, քաղա- քական, եւ կրթական մարզերու մէջ:

Մարթին Լուտեր 1505թ.ին կը մտնէ վանք, եւ 1507ին կ'օծուի քահանայ, որմէ ետք կը շարունակէ իր աստուածաբանական ուսումը: Սակայն իր անձնական



Մարթին Լուտեր

Աննոս Բանաստեղծ

փրկութեան մասին հիմնական հարց մը կար, որ երկար ժամանակէ ի վեր զինք կը տանջէր՝ մարդ արարած ինչպէ՞ս կրնայ փրկուիլ: 1515ին ան յատուկ փորձառութիւն մը կ'ունենայ (որ կը կոչուի բերդի փորձառութիւնը), երբ Պօղոս Առաքեալի նամակներուն ընթերցումներուն ընդմէջէն, յատկապէս Հո. 1.17ի՝ «վասն զի անով Աստուծոյ արդարութիւնը, որ է հաւատքէն, հաւատքի համար կը յայտնուի. ինչպէս գրուած է թէ՛ 'Արդարը հաւատքէն պիտի ապրի'», ան կ'անդրադառնայ թէ փրկութիւնը Աստուծոյ ձրի պարգեւն է եւ թէ մարդ, Աստուծոյ շնորհքով կը փրկուի, առանց պէտք ունենալու որոշ գործեր կատարելու, ինչպէս որ Եկեղեցին այդ օրերուն կը սորվեցնէր: Մարդ ինքնին անկարող է փրկութիւն ապահովել, սակայն հաւատքով Աստուծոյ փրկարար շնորհքը ի գործ կը դրուի հաւատացեալին կեանքին մէջ: Այս իմաստով կարելի է հասկնալ Մարդին Լուսերի նշանաբանը՝ [sola fides, sola gratia, sola scriptura] «միայն հաւատքով, միայն շնորհքով, եւ միայն Աստուծոյ Խօսքով»: Աստուծոյ փրկութիւնը ձրիաբար տրուած է մեղաւոր մարդուն, որուն կը մնայ սակայն հաւատքով ընդունիլ այդ պարգեւը: Մարդին Լուսեր իր փորձառութիւնը նկարագրելով կ'ըսէ. - «Այդ ատեն զգացի թէ վերստին ծնած եմ եւ մուտք գործած եմ դրախտէն ներս, բաց դռներէ»: ⁸⁸⁸

31 Հոկտեմբեր 1517ին, Լուսեր կը հրատարակէ 95 կարճ յօդուածներ որոնք կը շեշտեն անձնական հաւատքին կարեւորութիւնը եւ թէ Աստուածաշունչն է բարձրագոյն հոգեւոր հեղինակութիւնը, եւ ո՛չ որեւէ մարդկային իշխանութիւն: Լուսերի յօդուածները կը քննադատեն այդ ժամանակաշրջանի ներողագիրեր ծախելը, որոնց միջոցով

*** Luther's Works. vol. 34. Philadelphia: Fortress; St. Louis: Concordia, 1963-64, 337.

կ'ըսուէր թէ գնողը կրնար փրկութիւն ապահովել: Հակառակ անոր որ Լուտերի նպատակը Եկեղեցիէն բաժանում չէր, սակայն ան կը պնդէ անձնական հաւատքին դերը եւ Աստուածաշունչին հեղինակութիւնը: Իր այս կեցումածքը յստակ բաժանում կը նկատուի Եկեղեցիէն, մանաւանդ որ Գերմանիոյ քաղաքական վերնախաւին եւ յատկապէս իշխաններուն ցանկութիւնն էր ձերբազատուիլ եկեղեցական իշխանութենէն: Եկեղեցին մերժելով կրօնական ազատութիւն տալ, 1521ին կը բանադրէ Լուտերը:

Մարթին Լուտերի մահէն ետք, 1555ին, իր հետեւորդներուն թիւը կը մեծնայ (Գերմանիոյ ժողովուրդին գրեթէ կէսը), եւ Լուտերականութիւնը պաշտօնապէս կ'ընդունուի որպէս կրօնական դաւանանք: Լուտերականութիւնը շատ արագ կը տարածուի Սկանտինաւեան (Նորվեկիա, Շուէտ, Տանըմարք, Ֆինլանտիա) երկիրներու մէջ: Լուտերականութիւնը ընդունելով, անոնց եկեղեցիները կը կոչուին Լուտերական Եկեղեցիներ եւ կը դառնան անկախ՝ պապական հեղինակութենէ:

Բարեկարգութեան շարժումը Զուիցերիոյ մէջ

Զուիցերիոյ մէջ, Զուիցերիացի հովիւի մը՝ Ուլրիխստ Զուիկկլիի [Ulrich Zwingli] (1484-1531) առաջնորդութեամբ, 1523-1525ի միջեւ Բարեկարգութեան Շարժումը կը սկսի նախ Զուրիխի, եւ ապա՝ տարբեր քաղաքներու մէջ: Կաթողիկէներուն հետ երկար բախումներէ ետք, (որոնց ընթացքին Զուիկկլի կը սպաննուի) խաղաղութիւն կը տիրէ եւ որոշ կրօնական ազատութիւն կը տրուի ժողովուրդին: Երկրի տարբեր շրջաններէ իւրաքանչիւրը կ'ընտրէ իր կրօնական դաւանանքը: Սակայն Զուիցերիոյ մէջ կրօնական կատարեալ ազատութիւն կը տրուի 19րդ դարուն:

Ծոն Գալվին (1509-1564)

Ֆրանսայի մէջ բարեկարգումի շարժում նախաձեռնեց ֆրանսացի աստուածաբան Ծոն Գալվին [John Calvin]: Հալածանքի ենթարկուելով 1536ին Գալվին կը հաստատուի Զուիցերիոյ Ծենեա քաղաքին մէջ:



Ֆրանսացի աստուածաբան՝
Ծոն Գալվին
Առնոստ Բամացանցեհ

Գալվինի եկեղեցին կ'ըլլայ ժողովական եկեղեցի, այսինքն՝ եկեղեցւոյ ժողովուրդը կը հաւաքուի ընտրելու իր հովիւը, սարկաւագները եւ ժողովականները: Գալվին մեծ դեր ունեցած է Բարեկարգեալ Եկեղեցւոյ կազմակերպութեան մէջ. ան նաեւ կը հիմնէ համալսարան մը Ծենեայի մէջ, ուր հովիւներ եւ ուսուցիչներ կը պատրաստուէին:

Այլ երկիրներ Եւրոպայի մէջ եւ անկէ դուրս

Հոլանտայի, Պելճիքայի եւ այլ երկիրներու մէջ Բարեկարգութիւնը շատ արագ կը տարածուի՝ հակառակ որոշ ճնշումներու, սակայն Ֆրանսայի մեծամասնութիւնը կը մնայ Հռոմէական Կաթողիկէ համայնքին մէջ: Անգլիոյ մէջ, 1534ին, կը հիմնուի ազգային անկախ եկեղեցի՝ Անկլիքան (Անգլիական) Եկեղեցին, որ կը բաժնուի Պապին հեղինակութենէն, սակայն եկեղեցւոյ ծէսերը եւ կազմակերպութիւնը կը մնան Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ նման:

19րդ դարուն, միսիոնարներու ջանքերով Բարեկարգութիւնը կը տարածուի աշխարհի տարբեր երկիրներու մէջ

(ինչպես Թուրքիա, Սուրիա եւ Լիբանան), եւ այդ եկեղեցիները կը կոչուին Աւետարանական Եկեղեցիներ:

Բարեկարգութեան հիմնական եկեղեցական ընտանիքները
Վերոյիշեալ պատմութեան հետեւելով, կարելի է անդրադառնալ Բարեկարգութեան հիմնական եկեղեցական ընտանիքներու հետեւեալ խմբաւարումներուն.-

- 1. Լուսերական Եկեղեցի (Մարթին Լուտերի հետեւորդներ).*
- 2. Բարեկարգեալ Եկեղեցի (Զուիցերիական - Ֆրանսական Բարեկարգութենէ յառաջ եկած, Շոն Քալվինի հետեւորդներ). ասոր կը պատկանին Հայ Աւետարանական եկեղեցիները.*
- 3. Եպիսկոպոսական Եկեղեցի (Անգլիական Բարեկարգութիւն).*
- 4. Արմատական Բարեկարգեալ Եկեղեցիներ եւ իրենցմէ յառաջ եկած Ազատ Եկեղեցիները. ասոնց կը պատկանին՝ Քուէքթրոները, Մենոնականները, Մեթոտականները եւ Մկրտչականները, որոնք Արեւմտեան Բարեկարգութեան պատմութեան միաժամանակ իւրաքանչիւրը իր յատուկ պատմութիւնը ունի: Ասոնցմէ, 19րդ դարու վերջաւորութեան այլ Ազատ Եկեղեցիներ յառաջ եկած են, որոնք իրենք զիրենք ազատ կը նկատեն որեւէ հեղինակութեան հսկողութենէ, օր.՝ Հոգեգալստական եկեղեցիները:*

Բարեկարգութեան արդիւնքները
Բարեկարգութեան այս շարժումը մէկ աստուածաբանի մը կամ քանի մը անձերու ջանքով չէր: Ինչպէս յիշուեցաւ, տարբեր պատճառներ կային՝ կրօնական, տնտեսական, քաղաքական եւ գիտական, որոնք անհրաժեշտ դարձուցին Բարեկարգութիւնը:

Բարեկարգութեան արդիւնքով, կարգ մը երկիրներ եւ շրջաններ ունեցան քաղաքական եւ կրօնական ազատութիւն: Գրականութիւնը յառաջդիմեց, որովհետեւ իւրաքանչիւր երկիր իր երկրին լեզուով սկսաւ գրել եւ հրատարակել: Ասոնց որպէս արդիւնք, միջնադարեան Եկեղեցւոյ բարձր հեղինակութիւնը մասամբ վերացաւ, եւ հաւատքը անհատական համոզման վրայ հիմնուեցաւ:



Աստուածաբան մը՝ Paul Tillich կ'ամփոփէ Բարեկարգութեան Շարժումը «բողոքական սկզբունք» [Protestant Principle] միտքով: Այս երկու բառերով ան կը մատնանշէ Բարեկարգութեան Շարժումին բողոքելը կամ քննադատութիւնը որեւէ բացարձակ իշխանութեան: Մարդկային կամ աշխարհային գորութիւն մը իրաւասութիւնը չունի ինքզինք բացարձակ իշխանութիւն նկատելով ուրիշներու հնազանդութիւնը պահանջելու:

Այս իմաստով Բարեկարգությունը անհրաժեշտություն մըն է Բրիտանացիական Եկեղեցւոյ եւ հաւատացեալներու կեանքին մէջ ընդհանրապէս, միշտ զգաստանալու եւ անդրադառնալու, թէ միայն Աստուած է մարդուն կատարեալ վստահութեան առարկան: Հետեւաբար, բարեկարգությունը շարունակական արարք մըն է, եւ ոչ թէ պատմութեան մէջ մէկ անգամ պատահելիք դէպք մը:



21. Հայ Աւետարանական Եկեղեցին

Բարեկարգութեան փափաք եւ նպաստող ազդակներ

Հայ Աւետարանական Եկեղեցին հիմնադրութեան պատմութիւնը ունի որոշ նմանութիւններ Եւրոպայի մէջ տեղի ունեցած Բարեկարգութեան Շարժումին: Հայ Եկեղեցւոյ մէջ եւս, ինչպէս Արեւմուտքի մէջ, ժողովրդային բարեկարգութեան փափաք եւ մղում կար եւ այս փափաքին իրականացման նպաստեցին որոշ ազդակներ.

- 1808-1876 շրջանին հայեր Օսմանական Կայսրութեան մէջ վայելեցին որոշ քաղաքական ազատութիւն շնորհիւ «թանգիմաթ» կոչուող բարենորոգումի շարժումին: Այս մէկը քաղաքական եւ կրօնական բարեկարգութեան յոյսեր արթնցուց հայերուն մէջ, որուն արդիւնքներէն մէկն էր Պատրիարքարանի ընծայարանին հիմնուիլը:

- 1831 թ.ին Ամերիկացի միսիոնարներ, որոնք կը կոչուէին [American Board of Commissioners for Foreign Missions] սկսան անտարանշական առաքելութիւն մը Իսթանպուլի (նախապէս Կոստանդնուպոլսոյ) մէջ, որ հետագային տարածուեցաւ ամբողջ Անատոլիոյ շրջանը: Անոնք հիմնեցին դպրոցներ, հիւանդանոցներ եւ աստուածաբանական ճեմարան մը: Որոշ պատմական աղբիւրներէ կ'իմանանք, թէ երբ միսիոնարներ եկան այս շրջանները, անոնք գտան հայերուն մէջ հոգեւոր արթնութիւն եւ մտքի լուսաւորում:

- Հոս պէտք է յիշել թէ Պատրիարքարանի ընծայարանը, որուն նպատակն էր պատրաստել քահանաներ, առաջին վայրն էր ուր եկեղեցւոյ բարեկարգութեան մասին գաղափարներ կը զարգանան: Ընծայարանը հիմնուած էր 1828ին Գրիգոր Փէշտիմալճեանը ուենալով որպէս

տնօրէն: Փէշտիմալճեան դասախօս, գրագէտ եւ մտաւորական անձ մըն էր եւ իր աշակերտներէն ոմանք մեծ դեր ունեցան Բարեկարգութեան Շարժումին մէջ իրմէ ետք: Դժբախտաբար, Փէշտիմալճեանի մահով, 1838ին, ընծայարանը կը փակուի:

- 1836ին, խումբ մը երիտասարդներ, որոնք կը հաւաքուէին Աստուածաշունչի սերտողութեան եւ աղօթքի համար, կը կազմեն Բարեպաշտից Միաբանութիւնը, առանց Պատրիարքարանի հովանաւորութեան դիմելու: Հոն աւելի համարձակօրէն կը սկսին վեր առնուիլ Եկեղեցւոյ բարեկարգութեան անհրաժեշտութեան մասին գաղափարներ: Անոնք ձեռով մը Եկեղեցւոյ որոշ վարդապետութիւններուն դէմ կը սորվեցնէին՝ մերժելով սուրբերու միջնորդութիւնը եւ որոշ եկեղեցական արարողութիւններ աւելորդ նկատելով: Այս Միաբանութեան (որ ունէր 23 անդամներ) կազմուելով էր որ Պատրիարքարանը կը սկսի զայրանալ եւ դէմ դնել բարեկարգութեան ջանքերուն:

- Նաեւ Պոլսոյ շրջաններէն՝ Պէպէքի Երկրորդական Վարժարանը, իր գիշերօթիկ բաժնով, որ հիմնուած էր Ամերիկացի Համլինի կողմէ 1840ին, կարելոր կեդրոն մըն էր թէ՛ գիտական եւ թէ՛ աստուածաբանական ուսում ստանալու:

- Այս ամէնուն կողքին Աստուածաշունչի հայատառ թրքերէնի վերածումը (Միսոնար Ուիլիըմ Կուտէլի կողմէ^{†††})

^{†††} Ուիլիըմ Կուտէլ (1792-1867) եղած է Ամերիկացի միսոնար. ան Միջին Արեւելքի մէջ լեզուական դժուարութիւնը նկարագրելով գրած է թէ սովորական անձ մը հոն «չի գիտեր ինչ կ'աղօթէ, որովհետեւ ընդհանրապէս աղօթքները օտար լեզուով կը մատուցուին: ... Լիբանանցի Մարոնիները, որոնք Արաբերէն կը խօսին Սուրիանի լեզուով կ'աղօթեն ...

եւ հետագային աշխարհաբար թարգմանությունները մեծ դեր ունեցան հասկնալի դարձնելու Աստուածաշունչին պատգամը սովորական ընթերցողին. այլեւս անհատը ինք կրնար կարդալ, հասկնալ եւ խօսքին համեմատ ապրիլ:

Եկեղեցին հեռացում

Հայ Առաքելական Եկեղեցույ կղերականներէն ոմանք համակիր էին Եկեղեցույ բարեկարգութեան: Հակառակ իրենց կրած դժուարութիւններուն, անոնք կը շարունակեն ծրագրել բարեկարգութեան համար, նաեւ կը շարունակեն քարոզել եւ սորվեցնել Աստուծոյ խօսքէն: Հայ Եկեղեցույ բարեկարգութեան ջանքերու շարունակումով, Եկեղեցին իր հաղորդակցութենէն կը զրկէ բոլոր այն քահանաները եւ անձերը որոնք Բարեպաշտից Միաբանութեան մաս կը կազմէին: Անոնք նաեւ անընդունելի կը դառնան իրենց ընկերային միջավայրին մէջ եւ կը նկատուին անհաւատներ: Վերջնական բանադրանքը տեղի ունեցաւ 1846ին, երբ անոնք մերժեցին ստորագրել այն խոստովանագիրը որ պատրաստուած էր բոլոր Աւետարանական միտք ունեցողներուն համար, որպէսզի ետ դառնան իրենց առած քայլերէն:

Ծնունդ եւ հիմնադրութիւն

Բանադրանքի իբր արդիւնք, Հայ Աւետարականներ կը ստիպուին զատ եկեղեցի եւ համայնք կազմելու, մանաւանդ որ իրենց արգիլուած էր եկեղեցական արարողու-

Յոյները՝ դասական յունարէնով, Հայերը՝ դասական հայերէնով ... կաթողիկէները՝ Լատիներէնով ... մինչ, այս լեզուները իրենց համար մեռած լեզուներ են: Երբ իրենք առետարական գործ ունենան կ'ուզեն խօսիլ լեզուով մը, որ կը հասկնան, բայց երբ իրենց ստեղծիչին հետ գործ ունենան ... ընդհանրապէս անհասկնալի լեզուով կը կատարեն զայն:» Vrej Nersessian, *The Bible in the Armenian Tradition*, p. 37.

թիւններու մասնակցիլ, կամ խորհուրդներ ընդունիլ, ինչպէս պսակ կամ մկրտութիւն:

Այս նոր կազմուած Եկեղեցւոյ առաջին պաշտամունքը տեղի կ'ունենայ Իսթանպուլի մէջ 1 Յուլիս, 1846ին: Պաշտամունքին մաս կազմողներն էին 40 հաղորդական անդամներ, որոնցմէ երեքը կիներ էին: Պաշտամունքէն ետք Պատ. Աթաղոս Խաչատուրեան (Իւթիւճեան)՝ Փէշտիմալճեանի աշակերտներէն, կ'ընտրուի Եկեղեցւոյ հովիւ:



Բերայի Հայ Աւետ. Եկեղեցին, Իսթանպուլ, ուր Հայ Աւետ. Եկեղեցին ծնունդ առաւ 1 Յուլիս, 1846 թն:

Պետական ճանաչում

Հայ Աւետարանական Եկեղեցիին հիմնադրութեամբ Իսթանպուլի մէջ Օսմանական կառավարութիւնն ալ վերջնականապէս կ'ընդունի զայն որպէս անկախ «Բողոքական Համայնք» 1850 թուականին: Ասոր իբր արդիւնք, նոյն տարուան մէջ, Ստեփան Սերովբեան կ'ընտրուի ազգապետ (համայնքապետ) Թուրքիոյ մէջ գտնուող բոլոր Հայ Աւետարանականներուն:

1846-1856 տարիներուն շատ մը Հայ Աւետարանական եկեղեցիներ կը հիմնուին տարբեր վայրերու մէջ, ինչպէս Պոլիս, Էրզրում, Այնթապ, Հալէպ, Քիլիս, Իզմիր, Քէսասպ, Մարգուան, Կեսարիա, Արաբկիր, Մարաշ, եւ այլն:

Ի՞նչ կը շեշտէ Հայ Աւետարանական Եկեղեցին

Բարեկարգութեան, եւ ապա Հայ Աւետարանական Եկեղեցիին հիմնադրութեան հանգամանքները հասկնալու համար պէտք ունինք անդրադառնալու անոնց ետին գտնուող գաղափարներուն եւ նպատակներուն, հետեւաբար, պէտք է յիշել թէ Հայ Աւետարանական Եկեղեցին կը շեշտէ հետեւեալ կէտերը.

1. Քրիստոնէական հաւատքը անձնական հաւատք է. անհատը ի՛նք յարաբերութեան մէջ կը մտնէ Աստուծոյ հետ, Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով: Անձնական փրկութեան փորձառութիւնը շեշտուած է, որ կարելի է իւրացնել անհատին կողմէն միայն աստուածային շնորհքով. իսկ գործերով արդարացում կարելի չէ:

2. Աստուածաշունչը առաջնակարգ տեղ կը գրաւէ հաւատացեալին, ինչպէս նաեւ եկեղեցւոյ պաշտամունքի կեանքին մէջ: Պաշտամունքի ընթացքին Աստուածաշունչը կարդալ (աշխարհաբար հայերէնով քան՝ գրաբարով) եւ անոր պատգամը հասկնալի դարձնել՝ անհրաժեշտ է: Այսպիսով Աւետարանական Եկեղեցին հեռացաւ որոշ եկեղեցական արարողութիւններէ եւ ծիսակատարութիւններէ:

Հայ Աւետարանական Եկեղեցիի կարեւոր դէմքերէն

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ կարեւոր դէմքերէն, որոնք իրենց դրոշմը ձգած են Եկեղեցւոյ պատմութեան վրայ, յիշելու ենք՝ Փրոֆ. Լուիֆի Լեւոնեան (1881-1964) եւ Վեր. Յովհաննէս Ահարոնեան (1909-1986):



Բարեկարգութեան Շարժումին նպաստներէն հիմնականը մտքի եւ հոգիի լուսաւորութեան սիրումն էր: Ասոր կարենոր ապացոյցներէն են՝ Բարեկարգութեան զուգընթաց դպրոցներու եւ կրթական կեդրոններու ստեղծումը եւ տարածումը. ինչպէս նաեւ Բարեկարգութեան նախաձեռնած Աստուածաշունչի սերտողութիւնն ու Աստուծոյ Խօսքին մեկնութիւնը: Այսօր, Հայ Քրիստոնեան, անկախ համայնքային պատկանելիութենէ, կանչուած է նոյն մտքի եւ հոգիի լուսաւորման պաշտօնը ստանձնել, ա՛յն ինչ որ սկսան Եկեղեցոյ Հայրերը, իսկ մեծ վարդապետները, վարչապետները, գիտնականներն ու բարեկարգիչները շարունակեցին:



Ե. Միջ - Եկեղեցական Շարժումներ

22. Միջ - Եկեղեցական Շարժումներ

Հակառակ տարբերություններու եւ բաժանումներու, եկեղեցոյ պատմութեան ընթացքին տարբեր եկեղեցիներու միջեւ յատուկ ջանքեր եղած են եկեղեցիներու միութեան համար: Այս գիրքին մէջ կարելի չէ բոլոր այս ջանքերուն անդրադառնալ, սակայն պիտի յիշենք անոնցմէ երկու կարեւորագոյն շարժումներ, որոնք կոչուած են միջ-եկեղեցական շարժումներ:

Ի՞նչ կը հասկնանք «միջ-եկեղեցական շարժումներ» ըսելով «Միջ-եկեղեցական շարժումներ» են Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը, ինչպէս նաեւ՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը, որոնց հիմնական նպատակն է տարբեր եկեղեցիներու միջեւ միութիւն եւ հաշտութիւն ստեղծել: Ասոնք կը կոչուին «միջ-եկեղեցական», որովհետեւ տարբեր եկեղեցիներ իրենց օժանդակութիւնը կը բերեն այս շարժումներուն եւ կը ջանան համերաշխութիւն եւ հաշտ յարաբերութիւններ մշակել իրարու հետ:

Ա. Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը [World Council of Churches] ծնունդ առած է 1910 թ.ին Սկոտլոնդ (Scotland) Էտինպըրկ քաղաքին մէջ, միսիոնարական յատուկ համագումարի մը ընթացքին: Այս համագումարը ծնունդ տուած է երկու յանձնախումբերու՝ «Կեանք եւ Գործ», «Հաւատք եւ Կանոն», որոնք իրենց կարգին, գործակցելով, տարիներու ընթացքին, պաշտօնապէս հիմնած են Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը:



Պաշտօնական սկիզբ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը պաշտօնապէս ծագում առած է Ամսթերտամի մէջ 23 Օգոստոս, 1948ին: Այս Ժողովին ներկայ էին 351 ներկայացուցիչներ 147 տարբեր եկեղեցիներէ: Անոնք միասնաբար յայտարարեցին՝

«Մենք կը նորոգենք մեր նուիրումը Քրիստոսին հանդէպ եւ կ'ուխտենք միասնաբար հիմնել եկեղեցիներու այս խորհուրդը, իրարու հաւատարիմ մնալով»:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը, իր կերպով, որ կը բաղկանայ 150 ներկայացուցիչներէ, կ'ունենայ իր պաշտօնական նիստերը իւրաքանչիւր 6-8 տարիներուն: Վերջին ժողովը տեղի է Հարաւային Քորէայի մէջ 2013ին:

Անդամ եկեղեցիները

Աւետարանական Եկեղեցին ինչպէս նաեւ Ուղղափառ Եկեղեցին (Յոյն Ուղղափառ ինչպէս նաեւ Ռչ Քաղկեդոնական եկեղեցիները) սկիզբէն դեր ունեցած են կազմելու եւ զարգացնելու Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին աշխատանքները: Ինչպէս տեսանք, 1948ին իսկ 147 անդամ եկեղեցիներ կային: 1993ին անդամ եկեղեցիներուն թիւը հասաւ 322 ի: Ուրեմն, կարելի է ըսել թէ բոլոր եկեղեցիները անդամ դարձան այս Խորհուրդին բացի Կաթողիկէ եկեղեցիներէն, որոնք սակայն տարբեր ձեւերով հողորդակցութեան մէջ են ԵՂԽ ի հետ:

Բ. Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդ

Միջին Արևելքի մէջ նաեւ յատուկ ջանքեր թափուած են միութեան նպատակով: Որոշ աշխատանքներէ ետք, 1974ին կը հիմնուի Միջին Արևելքի Եկեղեցիներու



Խորհուրդը [Middle East Council of Churches], դարձեալ երեք եկեղեցական ընտանիքներու ջանքերով՝ Ուղղափառ Եկեղեցին, Ռչ-Քաղկեդոնական Ուղղափառ եկեղեցիները ինչպէս նաեւ Աւետարանական Եկեղեցին: Միջին Արևելքի եկեղեցիներու Խորհուրդին կը միանայ նաեւ Կաթողիկէ Եկեղեցին 1990 թ.ին:

Այս Խորհուրդին կեդրոնական մարմինը կը կազմակերպէ ժողովներ որոնք օրինաւոր ձեւով տեղի կ'ունենան իւրաքանչիւր 4-5 տարիներուն, առաւելաբար Կիպրոսի կամ Լիբանանի մէջ:

Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդին նպատակները

Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդը ջանացած է յոյս եւ հոգեւոր վերանորոգում սերմանել Միջին Արևելքի տարբեր շրջաններու մէջ, ընկերային եւ քաղաքական տարբեր դժուար վիճակներու եւ նեղույթիւններու մէջ գտնուող հաւաքականութիւններուն: Կարելի է հոս անդրադառնալ հետեւեալ մանրամասն նը- պատակներուն՝

1. Արտագաղթի մարտահրաւերին դէմ, Միջին Արևելքի Եկեղեցիներու Խորհուրդը կը քաջալերէ քրիստոնեաներուն ներկայութիւնը Միջին Արևելքի մէջ,
2. Ներկայ եկեղեցիներուն հոգեւոր նորոգութիւնը,
3. Քրիստոնեաներուն միաբանութիւնը,

4. Միեւնոյն քրիստոնէական վկայութիւնը բաժնեկցիլ, անկախ եկեղեցական ենթահողերու տարբերութիւններէն:

Այս իմաստով Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը ունի նաեւ չորս յանձնախումբեր, որոնց միջոցով կը ջանայ հետապնդել իր նպատակները՝ «Հաւատք եւ Միութիւն», «Դաստիարակութիւն եւ Վերանորոգում», «Հաղորդակցութիւն եւ Գիտութիւն» եւ «Կեանք եւ Ծառայութիւն»:

Ապագայի հանդէպ՝ հեռանկար

Այսօր, աւելի քան անցեալին, քրիստոնէաներ եւ յատկապէս եկեղեցիներ կը գտնուին միութեան մարտահրաւերի դիմաց: Միութեան մարտահրաւերը մեզ կը մղէ ճանչնալու նախ մեր պատմութիւնը, մեր հաւատքը եւ մեր քրիստոնէական համոզումները, որոնք իրենց կարգին մղելու են մեզ ընդունելու մեզմէ տարբերը, ինչ որ ալ ըլլայ իր դաւանանքը եւ համոզումները: Քրիստոնէական ուղիղ հիմերու վրայ հիմնուելով է որ կրնանք սիրել, քաջալերել եւ դէպի վեր բարձրացնել նոյնիսկ մեզմէ տարբերը:



Քրիստոնէական հաւատքը կարելի է ամփոփել Քրիստոնէական սիրոյ պատուէրով՝ «Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ: ... Բու ընկերդ սիրես քու անձիդ պէս» (Մտ.22.37-39):

Քրիստոնէայ Եկեղեցւոյ մեծ հերոսները մեծ էին իրենց սիրով: Այս է Քրիստոնէութեան խորքը եւ նշանակութիւնը:



Աղբիւրներու Ցանկ

Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու, Աստուածաշունչի Միացեալ Ընկերութիւններ, Պէչրուֆ, 1981.

Թորգոմ Եպիսկոպոս, (թրգմ.), Նարեկ Աղօթամատեան Ա. Գրիգոր Նարեկացոյ, Անթիլիաս-Լիբանան: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970.

Ահարոնեան, Վեր. Յովհաննէս, Հայ Աւետարանական Եկեղեցին - Ծանապարհներու Խաշաձեւումին, Պէչրուֆ: Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդ, 1988.

Արամեան, Մեսրոպ քահանայ (Գլխաւոր խմբագիր), Գանձասար, Աստուածաբանական Հանդէս, Երեւան, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի Թեմ «Գանձասար» Աստուածաբանական Կենտրոն, 1994.

Ալեէմէզեան, Նարեկ Եպս. (թրգմ.), Ս. Գրիգոր Նարեկացի, Խրատ Ուղիղ Հաւատքի եւ Առաքինի Մաքուր Վարքի, Անթիլիաս: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2002.

Քասունի, Վեր. Եղիա Ս., Լուսաշաւիղ - Պատմութիւն Հայ Աւետարանական Ծարժման 1846-1946, Պէչրուֆ: Տպագր. Շնորհօքեան, 1947.

Օրմանեան, Մաղաքիա, Հայոց Եկեղեցին եւ իր Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարչութիւնը, Բարեկարգութիւնը, Արարողութիւնը, Գրականութիւնը, ու Ներկայ Կացութիւնը (3 հատորներ), Կ. Պոլիս: 1911.

*Cross, F.L. & Livingstone, E. A. (ed.), **The Oxford Dictionary of the Christian Church**, Oxford, New York: Oxford University Press, 1997.*

*Chopourian, Giragos H., **The Armenian Evangelical Reformation: Causes and Effects**, New York: Armenian Missionary Association of America, 1972.*

*Kelly, J. N. D., **Early Christian Doctrins**, London: A & C Black Limited, 1993.*

*Martin Luther, **Luther's Works**, vol. 34. Philadelphia: Fortress; St. Louis: Concordia, 1963-64.*

*McManners, John (ed.), **The Oxford Illustrated History of Christianity**, Oxford: Oxford University Press, 1992.*

*Arpee, Leon, **A History of Armenian Christianity From Beginning to Our Own Time**, New York: Armenian Missionary Association of America, 1946.*

*Mother Teresa, **My Life for the Poor**, San Francisco, Harper & Row, 1985.*

*Nersessian, Vrej, **The Bible in the Armenian Tradition**, London: The British Library, 2001.*

*Roberts A., & Donaldson J. (eds.), **The Ante-Nicene Fathers: Translations of the Writings of the Fathers Down to A.D. 325**, Vol. 1, New York: Christian Literature Publishing Co., 1885.*

Rouse, Ruth; Neill, Stephan & Fey, Harold E. (eds.), A History of the Ecumenical Movement, Geneva: World Council of Churches, 1993.

Tootikian, Vahan, The Armenian Evangelical Church, Detroit, Mich.: Armenian Heritage Committee, 1982.

Tootikian, Vahan, The Benefits and Contributions of the Armenian Evangelical Church to the Armenian Nation (On the 1700th Anniversary of the Proclamation of Christianity as Armenia's State Religion), Fresno, Calif.: Armenian Evangelical World Council and Armenian Heritage Committee, 2001.

Walker, Williston, A History of the Christian Church, Edinburgh: T & T Clark, 1986.

Պատկերներու Աղբիւրները

Tootikian, Vahan, The Benefits and Contributions of the Armenian Evangelical Church to the Armenian Nation, *Fresno, Calif.:* Armenian Evangelical World Council and Armenian Heritage Committee, 2001.

Walker, Williston, A History of the Christian Church, *Edinburgh:* T & T Clark, 1986.

<http://www.jmeca.org.uk/christianity-middle-east/history-christianity-middle-east-north-africa>, Համացանցի մուտք՝ 24.08.2014

<http://www.ihmcsocal.org/news/read/the-god-who-touches-and-heals>, Համացանցի մուտք՝ 14.07.2014.

<http://www.saintdemianachurch.org/2012/08/30/on-st-justin-martyr/>, Համացանցի մուտք՝ 15.07.2014.

http://en.wikipedia.org/wiki/Tatev_monastery#mediaviewer/File:Tatev_Monastery_from_a_distance.jpg Համացանցի մուտք՝ 15.07.2014.

http://en.wikipedia.org/wiki/Vatican_City, Համացանցի մուտք՝ 16.07.2014.

<http://www.kiiitv.com/story/19740422/today-is-a-day-to-celebrate-st-francis-of-assisi>, Համացանցի մուտք՝ 16.07.2014.

<http://ncronline.org/news/vatican/paradox-pope-francis>, Համացանցի մուտք՝ 17.07.2014.

<http://www.dominicansistershawaii.org/prayer-and-reflection-corner/>, Համացանցի մուտք՝ 17.07.2014.

https://goodtimestories.files.wordpress.com/2013/10/mother_teresa_tout.jpg, Համացանցի մուտք՝ 17.07.2014.

<http://www.biography.com/people/martin-luther-9389283>, Համացանցի մուտք՝ 17.07.2014.

http://en.wikipedia.org/wiki/Old_St._Peter's_Basilica#mediaviewer/File:Affresco_dell%27aspetto_antico_della_basilica_costanti

[niana di san pietro nel IV secolo.jpg](#), Համացանցի մուտք՝ 18.07.2014.

<http://dic.academic.ru/pictures/wiki/files/65/Ancientlibraryalex.jpg>, Համացանցի մուտք՝ 18.07.2014.

<http://stage-d6.eurail.com/plan-your-trip/itineraries/european-highlights-itinerary>, Համացանցի մուտք՝ 18.07.2014.

<http://mecc.org/content/mecc-logo>. Համացանցի մուտք՝ 06.04.2015.

<http://wcc-coe.org/wcc/who/wcclogo-e.html>. Համացանցի մուտք՝ 06.04.2015.

People and Facts from Church History

Sylvie Avakian

